№ 12 (208) XIX ՏԱՐԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ 1909

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ԴՐՕՇԱԿԻ ՇՈՒՐՋԸ

Հարցեր շատ ունինք—ցաւոտ ու տանջող։ Եւ ամենից տանջողը—կազմակերպութեան հարցը...

Պատմութիւնը դրել է յատկապէս մեր կուսակցութեան առջև ահագին, դժուարալոյծ մի պրոբլեմ. կռիւ մղել միաժամանակ երկու-երեք ֆրօնտի վրայ, մերթ խաղաղ, մերթ արիւնոտ, արկածալի շեշտուել միաժամանակ երեք տարբեր միջավայրում—Ռուսաստանում, Թիւրքիայում, Պարսկաստանում—և շեշտուել, իբրև մի տեսակ պատերազմող կողմ, իբրև մէկը իրաւարար գործօններից. աշխատել, վերջապէս, բոլոր երեք ազդեցութեան շրջաններում, որպէս խաղաղ և բնականոն վերածնութեան մի ազդակ։

Միշտ գիտակ այդ իրողութեան և միշտ կանգուն պարտականութեան դաշտի վրայ, մենք երբէք չենք չափազանցրել մեր ուժերը, չենք էլ ուրացել, նւազեցրել արհաւրալի խոչընդոտները։ Քայլել ենք միշտ տոգորուած բոլոր ճշմարիտ յեղափոխականների այն աւանդական նշանաբանով, այն կորովատու գիտակցութեամբ՝ որ խիզախ և անձնուրաց փոքրամասնութիւնը, ուր որ էլ լինի, ինչ պայմաններում էլ որ շարժւի, կարող է յամառ ու յարատև ճիգերով ճանապարհ բանալ լեռնացած խոչընդոտների միջից և առաջնորդել ժողովուրդներին դէպի ազատութեան ու արդարութեան հանգրւանները։ Այդ հաւատը մի վայրկեան իսկ չը լքեց մեզ՝ մեր քսանամեայ երկարաձիգ ու դրամատիկ ուղիի վրայ. յեղափոխական հինաւուրց դաւանանքը ապացուցեց հետզհետէ իր փրկարար իմաստութիւնը և մենք ունեցանք վայրկեաններ—կովկասեան ճակատամարտները—երբ այդ խիզախ փոքրամասնութիւնը մէկէն ի մէկ ուռճանալով, կերպարանափոխւելով, դարձաւ ահեղ ու յաղթական մեծամասնութիւն, ձուլւեց ամբողջ ըմբոստացող ժողովրդի հետ, իսկ փոթորիկն անցնելուց յետոյ, ազատութեան կարճատև մեղրամիսում, հանդէս եկաւ—Պետական Դումայի, ռուսահայոց Կենտրոնական Ժողովի ընտրութիւններին—որպէս միակ ղեկավարը ժողովրդական ճակատագրի։

Եւ այսօր, երբ յետադարձ մի հայեացքով պրպտում ենք մեր ապրած հերոսական դրւագները, իրաւացի հպարտութեան հետ՝ մի բուռն, անդիմադրելի տենչ ենք զգում—շարունակել ապագայում, յարատևել նոյն ուժով ու հմայքով, նոյն տիրական և միշտ աւելի այլազանուող պաշտօնով, առաքելութեամբ։

Երբ Ռուսաստանում Հոկտեմբերեան մանիֆեստը բաց արեց սահմանադրութեան ու ազատութեան նոր դարագլուխ, եղան մարդիկ մեր տխմարամիտ հակառակորդների բանակում, որ ասում էին. „Դաշնակցութիւնը այլ ևս չունի գոյութեան իրաւունք կովկասում, այդ իրաւունքը մնում է միայն Թիւրքիոյ մէջ"։ Յուլիսեան յեղափոխութիւնից յետոյ էլ, նոյն մարդիկ, անտարակոյս, մտածում էին. „Թիւրքիայից էլ Դաշնակցութիւնը վերացաւ, պիտի վերանայ, քանի որ այլ ևս պէտք չը կայ մարտական-դաւադրական կուսակցութեան"...

Խիստ դիւրութեամբ էին լուծում նրանք մի մարմնի գոյութեան հարցը, և միանգամայն տրամաբանօրէն՝ իրենց չափով ու տեսակէտով։ Իրենց չափը — իրենց սեփական գոյութիւնն էր, անսկզբունք, անծրագիր, անդաւանանք, առանց որոշ սօցիալական աշխարհայեացքի, առանց որոշ ու յարատև ուղղութեան։ Եւ նոյն չափը կիրառում էին հակառակորդ մարմնի վրայ... „Նա պատահական մի խմբակցութիւն է, որ ապրել է իր շրջանը և պիտի լուծւի"...

Սակայն, այդպիսի „պատահականութեան" իմաստով չէ, որ Դաշնակցութեան հիմնադիրները ըմբռնել են իրենց թանկագին ստեղծագործութիւնը։ Եւ նրա համար չեն հայ ժողովրդի հերոսական ղաւակները տասնեակ տարիներով պայքարել ու նահատակւել կազմակերպութեան դրօշակի տակ, որպէսզի իրենց ծնողի նւիրական առաջադիմութեան դատը թողնւի մի գեղեցիկ օր հակաժողովրդական, գաղափարազուրկ խաժամուժի ձեռքը...

Դաշնակցութիւնը յարատևում է նոյնքան հզօր ու պերճախօս raison d'être-ով, որքան առաջ։ Մինչև օրս, բռնակալութեան շրջանում, նա եղել է հայ ազատագրական շարժման խորհուրդը, այսուհետև, սահմանադրութեան շրջանում—եթէ համարենք այն կատարեալ ու յարատև—նա դառնում է խորհուրդը հայ-ժողովրդական առաջադիմութեան։ Այդտեղ նրա գործունէութեան ծրագիրը նոյնքան յստակ է,

որքան առաջ։ Այդտեղ նրա սոցիալ-փիլիսոփայական աշխարհահայեացքը նոյնքան կուռ, հրապուրիչ ու արգասաւոր է, որքան նախկին դաւադրական-յեղափոխական հաւատամքը։

Հարկ կո՞յ յիշել, որ այդ „նախկինը“ մեր ալէծուփ ու երերուն իրականութեան մէջ դեռ պահպանում է իր ահարկու այժմէութիւնը, դեռ մերթ ընդ մերթ նշմարել է տալիս իր պաշտպանողական կամ յարձակողական վերադարձի հնարաւորութիւնները։ Ռուսաստանում՝ նա նոյնիսկ կենդանի անհրաժեշտութիւն է...

Ահա թէ ինչու հայ ժողովրդական և մարտական կուսակցութիւնը միշտ անխռով անցնելու է թշնամիների ու հակառակորդների իր դէմ հանած պատնէշներից և շարունակելու է իր դերը, որպէս հայ կեանքի մի կատեգորիկ իմպերատիվ, որի գոյութիւնը չեն քննադատում և որի առջև միայն խոնարհւում են։

*

Շարունակե՞լ աւելի կարող ու բեղուն, յարատևե՞լ աւելի զօրեղ գրականներով ու փաստերով... Այս է ամբողջ կուսակցութեան իղձը։ Եւ որպէսզի միշտ պատուով կարողանանք դուրս ելնել գալոց հնարաւոր տագնապներից, որպէսզի աջողութեամբ կարողանանք առաջ տանել երեք տարբեր միջավայրում մեր ստանձնած դժուարին առաքելութիւնը, անհրաժեշտ է ամենից առաջ իրականացնել մէկ բան—կազմակերպութիւն։ Հզօր ու կուռ մի Բլոկ, գաղափարական և մարտական մի ներդաշնակ ամբողջութիւն, պատկառելի իր որակով ու քանակով, տարածութեամբ և խորութեամբ, որ ընդունակ լինի իր կորովի միջամտութիւններով չէզոքացնել հակայեղափոխական ու յետադէմ հոսանքները և ապահովել հայ ժողովրդի անկաշկանդ առաջադիմութիւնը։

Դրօշակի շո՞ւրջը.. Ի՞նչ փոյթ, թէ ըէակցիան թեւատարած իշխում է Անդրկովկասում, թէ աջակողմեան խուժանը պատրաստում է Դումայի մէջ նոր սպառնագին հարցապնդումներ Հ. Յ. Դաշնակցութեան դէմ... Ստոլիպինին կարող են միանալ հայ ազգի մրուրը կազմող բոլոր անպատիւ հերոսները—և դարձեալ չեն խորտակի հայ ժողովրդի միջնաբերդը։

Ի՞նչ փոյթ նաև, թէ Երիտասարդ Թիւրքիայի աղգայնամոլ երևակայութիւնը յօրինել է 4-րդ յօդուածը, որ արդէն իսկ փորձեր է անում կիրառուելու... Աբդիւլ Համիդի դժոխային հնարքներն անգամ չ'աջողեցին ջնջել հրապարակից հայ քաղաքական կուսակցութիւնը։ Չեն աջողի և նրա երիտասարդ ընդօրինակողները. չորրորդ յօդուածը կը վերադառնայ ու նորէն կը ծեծուի պարլամենտի մէջ. բոլոր շատ թէ քիչ ռամկավարական տարրերը իրենց պատուի պարտք կը համարեն՝ կռուել յանուն գումարումների ու կազմակերպման լիակատար ազատութեան։

Կազմակերպուե՞լ... Այդպէս է ներկայի մարտակոչը։

Եւ նախ՝ Կովկասում։ Ուժերը այնտեղ ջլատուած, ցիրուցան, կազմակերպութիւնը՝ շատ տեղերում կազմալուծուած։ Արդիւնք հիասթափութեա՞ն։—Երբէք։ Ցեղափոխական կորովը մարա՞ծ։ — Ամենևին։ Դա ըէակցիայի ժամանակաւոր յաղթանակն է, որ տարածել է իր գերեզմանային շունչը ամբողջ ռուսական կայսրութեան վրայ։ Դա ըմբոստութեան ժամանակաւոր տեղատուութիւնն է՝ իր բոլոր ցաւագին արտայայտութիւններով։

Դառն է, անշուշտ, չափազանց դառն՝ մտաբերել մօտիկ անցեալը, պատութեան մեղրամիսը, երբ 15 տարուայ „ստորերկրեայ“ գոյութիւնից յետոյ, մէկէն ի մէկ լոյս աշխարհ ընկանք և մեր գոռ միտինգներով, խօսքի ու մտքի ազատ մարզանքներով թնդացրինք հրապարակը... Դառն է յիշել, որ այդ բոլորից յետոյ՝ նորէն իջանք դէպի ստորերկրեայ աղջամուղջը, նորէն ամբողջ յեղափոխական Ռուսաստանի հետ փարեցինք դաւադրական կարբոնարիզմին... Կորցրինք, տանուլ տուինք յեղափոխական շրջանի մի շարք կարևոր նաճու�ներ...

Այդ գիտակցութիւնը ճնշում է մեզ, բայց չի վհատեցնում։ Մենք հաւատում ենք, որ հեռու չէ ազատագրական նոր յորձանքը, հաւատում ենք, որ բռնապետական կառավարութիւնը իր գլխապատառ վազքի մէջ դէպի նախկին, պօբեդոնոսցեվեան օրերը՝ դատապարտուած է խորտակուելու... Պէտք է փութացնել այդ խորտակումը կամ յամենայն դէպս—այս մէկը գուցէ ամենահրամայականն է մեզ համար—պէտք է հսկել, որ սահմանադրական բռնապետութեան այդ վազքը թանկ չը նստի հայ ժողովրդին, չը բերէ նրան նոր աղէտներ, նման 1903-ի, 1905—906-ի աղէտներին, չը խլէ նրանից ազգային առաջադիմութեան այն լղարիկ իրաւունքներն ու հաստատութիւնները, որոնք նոյն յեղափոխական օրերի նուաճումներից են։

Կարբոնարիական գետնայարկե՞ր... Ի՞նչ արած, երբ կառավարութիւնը զօռով բշում է այնտեղ յեղափոխական բոլոր մարմինները։ Պէտք է համակերպել այդ ճակատագրականութեան, բայց համակերպել ոչ իբրև ստրուկ, այլ իբրև ըմբոստ, որ գնում է սրելու իր զէնքերը մթութեան մէջ, որպէսզի բարեպատեհ վայրկեաններին դուրս արշաւէ ժողովրդային զանգուածների հետ և կամ գաղտնի դարաններից շանթահարէ հին ըէժիմի խիստ եռանդուն ռահվիրաներին։ Մենք ուզեցինք խաղաղ պայքար սահմանադրական իրաւակարգի մէջ—մեզ մղեցին նորէն դէպի դաւադրութիւն և արիւն։ Ձեռնոցը նետուած է ամբողջ ազատատենչ ու յեղափոխական Ռուսաստանին և վերջինը բարձրացնում է այն, թէկուզ պէտք լինի իր լիակատար յաղթութեան համար դարձեալ տասնեակ տարիների ճիգ ու զոհողութիւն...

Դաւադրական շրջանը վերադառնում է կայսրութեան բոլոր բաժիններում, անգամ Ֆինլանդիայում։ Ստոլիպինեան կառավարութիւնը, կախաղաններով ու մասսային գնդակահարումներով ձեռք բերած իր յաղթանակից յետոյ, ոչ թէ միայն անընդունակ է գտնւում պետական ամենատարրական իմաստութեան, ոչ թէ միայն մերժում է ամենահրատապ ըէֆորմները, այդ ալէծուփ երկիրը հանգստացնելու համար, այլ և վճռել է տալ աշխարհին բռնակալական ամբարտաւանութեան չը տեսնուած ապացոյցներ. և ամենաապշեցուցիչ ապացոյցը—Ֆինլանդիայի դէմ նիւթած արշաւանքը... Հերթը կը հասնի ուրիշ Ծայրերին, Լեհաստան, Կովկաս նոյնպէս կ՚անցնին յետադիմութեան քուրայի վրայից, արդէն անցնում են...

Դաւադրական շրջանը վերադառնում է—պէտք է շտապել։ Նորէն՝ կեցցէ՞ խաւարը... Պէտք է վերականգնել գաղտնի կազմակերպութիւնների ցանցը քաղաքներում ու գաւառներում—ինտելիգենցիայի, բանւորութեան, գիւղացիութեան շրջաններում։ Առանց ցասկոտ, հիւանդագին շարժումների, բայց և առանց ծոյլ ու իներտ յապաղումի։ Մեր թշնամիները անասելի եռանդ են թափում մեր շարքերը ճարակելու—ցոյց տանք մենք ևս համահաւասար եռանդ, տոկունութիւն։ Երէկւայ ըմբոստներից շատերն են արդէն գրաւել կուլտուրական շարժման հրապոյրներով, անձնատուր եղել իրերի հոսանքին և կրաւորական հաւատաւոքի մէջ մոռացել են թերևս ըէակցիայի գահավէժ .սլացքը, որ գալիս է վերստին պոկելու ամենուրեք „կուլտուրականութեան“ նորաբողբոջ ծաղիկները։

Քանի դեռ ուշ չէ, պէտք է սթափւել և վերաշինել կազմակերպութիւնը, համախմբել հին ու նոր ուժերը, կուսակիցներին ու համակիրներին, համախմբել դրօշակի շուրջը բոլոր նրանց, որոնք դաւանում են մեր ծրագիրը, ընդունում են մեր տակտիկը և իրենց խօսքով ու գործով յարմարւում են այդ տակտիկին, այդ ծրագրին։

Վերակազմելու է հին շրջանակները, աւելացնելով նոր, թարմ, գործօն ուժերի այն պաշարը, որ արտադրում է մեր կեանքը։ Ասե՞լ արդեօք, թէ որպիսի ծայրայեղ զգուշութիւն է պէտք ընտրութեան մէջ... Ցիշե՞լ արդեօք, թէ որպիսի ծայրայեղ հոգացողութեան նիւթ պիտի լինի մեր շարքերի մաքրութիւնը, ներկայ խառնակ, վտանգաւոր ժամանակներում, երբ համառուսական, նոյնիսկ յեղափոխական մթնոլորտը լեցուն է ամեն տեսակ բախտախնդիր տիպերով, լրտեսներով, պրովոկատորներով, մանր ու խոշոր Աղեվներով... „Դաշնակցութիւնը“, փա՞ռք բախտին, ազատ է մնացել այդ սարսափելի վարակումներից։ Պատճառն այն չէ, ի հարկէ, որ իբր հայոց մթնոլորտը աւելի մաքուր է, քան ռուսականը, օ՜, ոչ տարբաբախտաբար. վխտում են մեզ մօտ ևս ամեն կարգի սողուններ, որոնք մասամբ մերկացած են անցեալում և արժանաւոր պատիժը կրած յեղափոխական Նեմեզիդայից, ուրիշները մնում են տակաւին ստւերի մէջ... Պատճառը—Դաշնակցութեան բարոյական և ռազմական հմայքն է, որ չէզոքացնում է անմաքուր շահատակութիւնները։

Այո՛, եթէ մի կողմից մեզ անասելի ցաւ է պատճառում վատ, չարագործ տիպերի երկարամեայ և գործօն ներկայութիւնը յեղափոխական բարձրագոյն շարքերում իսկ՝ ս.-ր.-ների, ս.-դ.-ների, բունդիստների աշխարհում, մեր բոլոր հարևանների մօտ, մեր բովանդակ շրջապատում,—ապա միւս կողմից պատճառ ունինք մխիթարւելու մեր սեփական դաշնակցական միջավայրի վերաբերմամբ... Այդ միջավայրը միշտ եղել է մահացու՝ դաւաճանութեան բացիլների համար և վերջինները սովորաբար խեղդւել են սաղմի մէջ։

Եւ, վերջապէս, մեր զարմանալի, խորհրդաւոր ժամանակներում, պոլիցիական դաւաճանութիւնների և շառաչուն „մերկացումների“ ներկայ ծանր մթնոլորտում՝ հին, „սրբազան գաղտնիքները“ այլ ևս իսպառ կորցնում են իրենց իմաստը. բոլոր դաւաճանները յայտնագործւում են, բոլոր պետական անարգանքները փուում են աշխարհի առաջ... Լօպուխինի մարտիրոսութեան դափնիները հանգիստ չեն տայ ուրիշներին—և այսօր գուցէ արդէն դողում են բոլոր նրանք, որոնք մտել են գառան մորթով, գայլի սրտով յեղափոխական շարքերի մէջ և բոլոր նրանք, որոնք վստահ տէրունական գաղտնիքների բացարձակ անձեռնմխելիութեան վրայ, կատարել են իրենց անարգ սխրագործութիւնները շարքերից դուրս... Եւ վա՜յ նրանց, այդ վատերին։ „Ռըվանշը“ մի օր կը գայ, սարսափելի „հատուցումը“ կը ժամանէ վաղ թէ ուշ... տերրորիստի սրի ծայրին, ատրճանակի գնդակի մէջ...

Հեռո՜ւ, ուրեմն, անվստահելի, կասկածելի տարրերը. թող քիչ լինենք դրօշակի շուրջը, բայց տոգորուած յեղափոխական, քաղաքացիական նկարագրով ու մօրալով։ Վատ գործերը վարակիչ են—և այսօր աւելի քան երբևիցէ անհրաժեշտ է ծայրայեղ, աչալուրջ հսկողութիւն մեր ամբողջ շրջապատի վրայ...

*

Շարքերը վերակազմելու հետ՝ զուգընթացաբար առաջ տանել կանոնաւոր ու մեթոդիկ աշխատանքը։ Պրոպագանդը—մեր գերագոյն միջոցը։ Արգելւում են հրապարակական ժողովները—պէտք է դիմել գաղտնի հաւաքումների։ Արգելւում է ինտելիգենցիային՝ տալ բանւոր ու գիւղացի ընդհանրութեանը ամենատարրական ծանօթութիւնները գիտութեան ու կուլտուրայի մասին—պէտք է հիմնել, բազմացնել

ընթերցանական ու ատենաբանական իլլեգալ ակումբներ, ինչպէս նախնի օրերում։

Սակայն, տուերի մէջ մտնելով հանդերձ՝ յեղափոխական կազմակերպութեան առաջին հոգսը պիտի լինի՝ չը խզել երբէք իր կապերն ու շփումը ժողովրդային զանգուածների հետ։ Ազատութեան կարճատև օրերում մենք տեսանք այդ զանգուածների ոգևորութիւնն ու հասունութեան աստիճանը, տեսանք թէ ինչպէս ագահութեամբ կլանում էին մեր խօսքը, մեր կուսակցական մամուլն ու գրականութիւնը, տեսանք, զգացինք կուսակցութեան թովիչ ազդեցութիւնը այդ մասսաների վրայ։ Ո՞ւր են նրանք... Չեն անհետացել, ապրում են և կարօտով սպասում են մեր ձայնին, մեր ընկերական խորհրդին ու ղեկավարութեան։ Թողնուած ի սաստ ճակատագրի, նրանք դիւրութեամբ կարող են լքուել ու ենթարկուել դեմօրալիզացիայի...

Հսկայական է մեր պարտաւորութիւնը աշխատաւոր ընդհանրութեան հանդէպ։ Անհրաժեշտ է այս կամ այն ձևով հակազդել, արձագանք տալ նաև լեգալ, օրինական կեանքի այլազան արտայայտութիւններին ու պահանջներին. իսկ այնտեղ, ուր որ շատ թէ քիչ հնարաւորութիւն կայ ձեռք զարնելու աշխատաւորական—բանուոր կամ գիւղացի—միութիւնների, կօօպերատիվների, փոխադարձ օգնութեան միութիւնների, արհեստակցական կազմակերպութիւնների—ընկերները պիտի աշխատեն օգտագործել հանգամանքը, հիմնել այդպիսի, թէկուզ և չէզոք, անկուսակցական միութիւններ, բանուորների, գործակատարների, գիւղացիների մէջ, ուղղութիւն տալ նրանց տնտեսական պայքարին, բարձրացնել նրանց նիւթականն ու հոգեկանը մանր ու խոշոր նաճու�ներով, պատրաստել նրանց միաժամանակ գալոց վճռական ճակատամարտների համար.. Աւելացնենք։ Անդուլ կազմակերպելով ու աճեցնելով մեր շարքերը, մենք դրա հետ միասին պէտք է խոյս տանք ներվոտ, էքսցենտրիկ գործողութիւններից, չը վարենք կազմակերպական մեր աշխատանքը այն գիտակցութեամբ, թէ „վճռական ճակատամարտները“ արդէն մօտ են... Ոչ, դժբախտաբար. Ռուսաստանի յեղափոխական ուժերի արդի վիճակում՝ մասսային քաղաքական շարժումները չեն կարող լինել մօտիկ ապագայի հնարաւորութիւն... Հարկ է ամուր դրոշմել այդ՝ մեր մտքի մէջ և գիտակցել, որ առանձնացած, յախուռն, անսիստեմ բռնկումները միմիայն մէկ Ծայրագաւառում, միմիայն մի փոքրիկ ժողովրդի ծոցում, այժմեան ծանր պարագաների մէջ դատապարտուած են ցաւագին, աղէտաբեր վիժումների... Խնայե՛լ պէտք է յեղափոխական կորովը, մանաւանդ մեր սակաւարիւն միջավայրում, գործադրել այն՝ միայն *in extremis*, միայն այնպիսի ծայրագոյն պայմաններում, երբ կայ մի տեսակ անդիմադրելի *force majeure* և երբ նա կարող է գործադրել աջողութեան խոշոր հաւանականութեամբ...

Պրոպագանդը — մեր ամենօրեայ, լաւագոյն զէնքը։ Պրոպագանդը այն մեծագործ, յեղաշրջող ուժն է, որ վիթխարի պատնէշներ է վայր գլորում... Բրոշիւրների, գաղտնի ու յայտնի գրականութեան, գրաւոր ու բանաւոր քարոզի հեղեղն էր, որ մտքերը պատրաստելով, առաջ բերեց 1905-ի սոցիալիստական հոյակապ զօրաշարժը ամբողջ ռուս կայսրութեան մէջ և որ խլեց գոռոզ միապետից հոկտեմբերեան մանիֆեստը։ Քարոզենք ամենուրեք մեր կուսակցական աւետարանը և չը վհատինք, որ ժողովրդային զանգուածները փութով, դիւրութեամբ չեն իւրացնում այն։ Այդպէս է գաղափարների ճակատագիրը։ Նոյն Ռուսաստանում, չը նայած մի շարք տասնամեակների անդադրում աշխատանքին, այսօր տակաւին անջրպետներ կան աշխատաւոր ընդհանրութեան և ռամկավար ու սոցիալիստ մտաւորականութեան միջև. վերջինս փայլուն, անգնահատելի նաճուումներ է արել, բայց միայն տակաւին 80 միլիոնաւոր աշխատաւորութեան մի փոքրիկ հատուածի մէջ։ Երևոյթը—որ „զանգուածային հոգեբանութեան“ մէջ նորատեցութիւն (միզոնէիզմ) անունն է կրում—յատուկ է նաև արևմտեան մասսաներին, որոնք ունին իրենց ետևում հարիւր տարեայ յեղափոխական կեանք ու ազատագրական թռիչքներ։

*

Գաւառը, մանաւանդ, չը լքենք։ Մեր կազմակերպական ապակենտրոնացումը—ինքնին մեծ, համակրելի մի սկզբունք—ունի երբեմն իր ստերաւոր կողմերը։ Դուռ բանալով երբեմնապէս անիշխանական անկարգութեան, նա յաճախ մատնում է հեռու գաւառների մարմինները կորածութեան ու մոռացութեան։ Քանի՞ անգամ գանգատներ ենք լսել այդ հեռաւոր անկիւնների կոմիտէներից, իրենց լքուած ու անօգնական վիճակի մասին։ Կուսակցական հրատարակութիւնները նրանց չեն հասնում, կուսակցական կենդանի խօսք նրանք չեն լսում—ձեռնհաս գործիչները խիստ սակաւ են երևան գալիս նրանց հօրիզոնում։ Այն մարմինները, որոնք իրենց աշխարհագրական դիրքերով և Ընդհանուր Ժողովներից առած որոշ իրաւունքներով ստանում են կենտրոնական մարմինների հանգամանք, սովորաբար ծծում են կուսակցութեան լաւագոյն ուժերի մեծամասնութիւնը—և գաւառական կոմիտէները մնում են յաճախ բախտի կամքին։ Հետևանքը—կազմալուծում։ Աւելի ևս։ Հետևանքը լինում է այն, որ տեղ-տեղ զարգանում է շանտաժային, խուլիգանական շարժումը, նոյնիսկ կուսակցութեան անունը կրող անհատների մասնակցութեամբ։ Ցիշենք, թէկուզ, ամենահայաշատ Շիրակը իր զուտ հայկական ու աշխատաւորական կենտրոնով, որ մօտ անցեալում անպատիւ շանտաժների թատր էր դարձել—մի տեսակ կուսակցական վանդէա... Կազմակեր-

պութիւնը հասնում էր, ի հարկէ, ժամանակին և քաւել տալիս յեղափոխութեան տղրուկներին, բայց այն էլ ցաւ է, որ նրանք կարողանում էին հրապարակ գալ և տարածել իրենց թունաւոր շունչը գաւառի վրայ։ Ծրագրային կենդանաբար խօսքի տեղ, ահագին հայ աշխատաւոր ազգաբնակութիւնը կերակրւում էր երկար ժամանակ շանտաժային հերոսների սխրագործութիւններով և բնականաբար պաղում էր՝ թէ դէպի կազմակերպութիւնը և թէ առհասարակ դէպի ամեն մի գաղափարական գործ։

Ապակենտրօնացումը, հեռաւոր մարմինների ինքնագլուխ ու ավտոնոմ գործունէութիւնը լաւ բան է, ի հարկէ, բայց միայն պայմանով՝ որ նրանք կարողանան սեփական ուժերով զարգանալ ու բարգաւաճել։

Պէտք է դարման գտնել գաւառական անտէրութեանը։ Այնտեղ, անդրկովկասեան խուլ ու խոպան անկիւններում շատ քիչ են արծարծւել մեր սոցիալական ու քաղաքական գաղափարները, և եթէ եղել են մերթ ընդ մերթ ըմբոստութեան բռնկումներ մեր դրօշակի տակ,—դա էլ եղել է գուցէ մեծ մասամբ՝ տարերայնօրէն, մղւած այն խորունկ հաւատից ու վստահութիւնից, որ ժողովուրդը տածել է միշտ դէպի մեր դրօշը։ Կովկասեան ոչ մի կուսակցութիւն — վերջին տագնապոտ շրջաններում—չի ունեցել իր տրամադրութեան տակ այնքան ընդարձակ, մասսային ուժ, ինչպէս մենք—և, կարելի է ասել, ոչ մի կուսակցութիւն չի ցոյց տւել այնքան ինքնատարբերութիւն դէպի իր մասսաների կրթութեան ու դաստիարակութեան խնդիրը—ինչպէս մենք։ Ուժեղ կազմակերպութիւնները չեն թագցնում իրենց վրիպումները. խոստովանենք և ջանանք սրբագրել նրանց։

Ուժերի ծայրայեղ խնայողութեան հետ (թէ մտաւոր և թէ նիւթական ուժերի)՝ անհրաժեշտ է նրանց խելացի բաշխումն։ Պրոպագանդի ծանրակշիռ գործը, որի աջող կամ ձախորդ տնօրինումից կախւած է կազմակերպութեան ապագան, պէտք է դրւի մեր բոլոր մարմինների մէջ ամենալուրջ վերաբերութեան։ Նա պէտք է դրւի խոր ու բանաւոր հիմքերի վրայ, որպէսզի ստեղծէ ամբողջ կուսակցական օրգանիզմի մէջ ներդաշնակութիւն ու ամբողջութիւն։ Վերջին Ընդհանուր Ժողովը որոշել է — նոյն ամբողջացման նպատակով—կենդանի յարաբերութեան մէջ դնել մեր հրատարակչական մարմինները։ Միանգամայն տեղին է ընդհանրացնել այդ որոշումը և աշխատել ամենակենդանի կապ ու շփում հաստատելու կուսակցութեան կենտրոնների և հեռաւոր ծայրերի միջև։ „Շրջիկ պրոպագանդիստների“ սիստեմը, որ անցեալում շօշափելի ծառայութիւններ է մատուցել մեզ, պէտք է դառնայ իրօք սիստեմ, ոչ կցկտուր, պատահական մի մարզանք։ Գէթ նրա միջոցով՝ կենտրոնական հաստատութիւնները պիտի ձգտին լրացնել գաւառների կարիքները, կատարել նրանց հանդէպ իրենց պարտքը — որոշ չափով հսկողութիւն, որոշ չափով ղեկավարութիւն։

Յատուկ շրջիկ պրոպագանդիստներ—գիւղացիութեան համար։ Որքա՜ն անհրաժեշտ է այդ խաւար ու տարաբախտ աշխարհում մի հզօր ու կուռ կազմակերպութիւն, որ ամեն օր արձագանք տայ կեանքի ցաւոտ պահանջներին, հովանաւորէ մանր, անհող ու սակաւահող գիւղացիութիւնը—մեր ծրագրի ու տեսչերի կենտրօնական առարկաներից մինը—ամեն կարգի գիշատիչների դէմ։

Յատուկ շրջիկ պրոպագանդիստներ—երիտասարդութեան համար։ Պէտք է պինդ պահել մեր ձեռքերում ամենաթանկագին այդ տարրը, հեռու մնասակար ազդեցութիւններից, հեռու նաև բուրժուա-լիբերալ ու սոցիալական ներշնչումներից։ Երկուսն էլ հաւասարապէս ծուլարար, ընդարմացնող։ Կենդանի, առողջ գործի երիտասարդութիւնն է եղել միշտ մեր դրօշակի տակ — ոչ ամուլ ֆրազէօլօգիայի և անհատնում ըէզոնեօրութեան երիտասարդութիւնը։ Այդպէս պիտի լինի և այսուհետև։ Սոցիալական վարդապետութիւնների ու նշանաբանների քարոզի հետ՝ պէտք է յար և միշտ արծարծել այդ երիտասարդ շարքերում ռազմական, ըմբոստ ոգին, մտցնել նրանց գիտակցութեան մէջ, որ ներկայ երևութական անդորրութիւնը ժամանակաւոր է, որ քաղաքական մթնոլորտը դառնալու է միշտ աւելի խեղդուկ ու մահաբեր, որ ըէակցիայի ջանքերով իսկ, նրա գահավէժ ու խելակորոյս ընթացքով՝ հասարակական կեանքը նորէն վաղ թէ ուշ բռնւելու է օրհասական ու ազատարար ցնցումներով, որոնց—ուզենանք թէ չուզենանք—պիտի մասնակցենք մենք ևս... Գուրգուրանքո՞վ պահպանենք երիտասարդ աշխարհի մէջ ցանած մեր այն նուիրական կորիզները, այն մարտական սաղմերը, որոնց կուռ մէջքին յենւած՝ մենք վարեցինք երէկւայ անմոռանալի ճակատամարտները և որոնք ապագայում ևս — երբ շարժման կոհակները վերստին կը հեղեղեն ամենուրեք—դարձեալ հանդէս կը գան իրենց զւարթ ու կենսուրախ շարքերով և կը քարշեն իրենց ետքից մասսաներին...

Զը մոռանանք և աճող սերունդը։ Զը մոռանանք այն մատաղ գլուխները, որոնցից շատերը այսօր արդէն մեր կրտսեր ընկերներն են, որոնք մտիկ ապագայում, մեր հայեացքներն իւրացրած, մեր ծրագիրը խորացրած, պիտի մղեն մեր շարքերում ժողովրդական պայքարը յանուն ազատութեան ու սոցիալիստական հաւասարութեան։ Ահա նրանք հազարներով տնքում են դպրոցներում, ենթակայ մեծ մասամբ ապականող, այլասերող ըէժիմների, կարո՞տ նոր խօսքի, մտքերի ու պատգամների, ծարա՜ւ, գուցէ, գաղափարական, անձնուրաց թռիչքների... Գնացէ՛ք, ընկերներ,

աշակերտութեան մէջ, բազմացրէ՛ք նրանց մէջ էլ ազատարար „կորիզները“ — աշակերտական միութիւնները, մեր դրօշի տակ, մեր ընկերական—ոչ մենտօրական—ղեկավարութեան ներքոյ։ Տարածեցէ՛ք նրանց շրջաններում մեր կուսակցական գրականութիւնը, խթանեցէ՛ք նրանց մատաղ հարցասիրութիւնը։ Տուէ՛ք նրանց ինիցիատիվ, ինքնուրոյնութիւն, և մի՛ դատապարտէք կրաւորականութեան։ Ուղղութիւն տուէք նրանց մտաւորին ու բարոյականին, բայց վաղաժամ մի՛ փաթաթէք նրանց վզին՝ ձեր քաղաքական ու սօցիալական գաղափարները։ Վառեցէ՛ք նրանց մէջ ուսումնասիրութեան ծարաւը և միաժամանակ իդէալիզմի ու անձնուրացութեան կայծերը։ Պատրաստեցէ՛ք նրանցից աշխատաւոր ժողովրդի ապագայ բարեկամներ ու պաշտպաններ, կրթեցէ՛ք մարտընչողներ...

Մեծ, նուիրական, դժուարակնճիռ պարտաւորութիւններ... Հարուստ, ճիւղաւորուած, բազմազան մի աշխատանք։ Այդպէս է մեր կուսակցութեան աշխատանքը։ Այդ ահագին պահանջին գոհացում տալու համար՝ անհրաժեշտ է ուժերի պատկառելի մի պաշար։ Եւ նախ—մտաւոր ուժերի։ Պրօպագանդային այդ բարդ գործունէութիւնը պահանջում է կուսակցական հասուն, կարող ինտելիգենցիա, մտաւորականութիւն, որ բերէ թէօրիական ծանօթութիւնների լոյսը այդ զանազան շրջանների մէջ, ներշնչէ, կազմակերպէ, ղեկավարէ։ Մտաւորականութիւն՝ որ կարողանայ ստեղծել ամենուրեք գիտակցական վերաբերում դէպի շրջապատող երևոյթները, բացատրել, մեկնաբանել այդ այլազան խաւերին իրականութեան ու հասարակական գիտութեան բազմապիսի կնճիռները,—թև տալ անդէտ և ազնիւ աշխատաւոր մասսաներին, օգնել նրանց ընտրելու լաւագոյն ճանապարհը կեանքի ճնշող լաբիւրինթոսում,—այդպէս միայն կը պատրաստուի յեղափոխական առաջադիմութիւնը, այդպէս միայն կը տնի ու կը բարգաւաճէ մի այնպիսի մեծ կազմակերպութիւն, որպիսին մերն է, կըստեղծուի նրա շարքերում բաղձալի համադրութիւնը, սինթեզը, բոլոր հատուածների ներդաշնակութիւնն ու ամբողջութիւնը... Գաղափարներով են ապրում, շնչում քաղաքական ու սօցիալական կուսակցութիւնները, — ցանե՛լ պէտք է այդ գաղափարները, ըստ կարելւոյն առատութեամբ և ըստ կարելւոյն լայն չափերով՝ կենտրոններից դէպի հեռաւոր ծայրերը։

Ունի՞նք արդեօք այդպիսի մտաւորականութիւն... Այստեղ դարձեալ նոյն վշտաբեր հակօրինութիւնը։ Թւում է, ունինք, բայց և չունինք։ Ասացինք քիչ առաջ, որ կովկասեան ոչ մի կուսակցութիւն չունի մասսաներ այնպիսի լայն համեմատութեամբ, ինչպէս մենք։ Նոյն դիտողութիւնը արդարացի է ինտելիգենցիայի նկատմամբ։ Դաշնակցութեան շրջանակներում տեղաւորուած է հայկական լաւագոյն մտաւորականութեան մեծամասնութիւնը։ Բայց այդ ահագին ուժը չի գտնում ցանկալի բաղխումն ու գործադրութիւն մեր պայքարի ուղղութեամբ։ Մի կողմ թողնելով այն անհատներին, որոնք տակաւին գտնւում են գաղափարական տարուբերումների հոսանքում, մէկ ոտքով սօցիալիզմի մէջ, միւս ոտքով՝ դեմօկրատիզմի—դաշնակցական ինտելիգենցիան ինչպէս շեշտեցինք „Դրօշակի“ նախորդ խմբագրականով, ընդհանրապէս շատ քիչ ուշադրութիւն ու եռանդ է նուիրում քարոզչական գործունէութեանը, մանաւանդ խօսքի պրօպագանդին։ Այդ հանգամանքն ունի իր ծանօթ բացատրութիւնը, եթէ ոչ արդարացումը։ Գործի պրօպագանդը սկզբից ի վեր կուսակցութեան եղակի մտահոգութիւնն է եղել և մենք յաճախ առիթ ենք ունեցել տեսնելու, թէ ինչպէս հակառակորդ կուսակցութիւնների մասսորսութեան գլխապատառ արշաւանքի հանդէպ—երբ նրանք ձգնում էին խլել հողը մեր ոտքի տակից, խլել մեզնից մեր մասսաներին քաղաքներում ու գաւառներում—տեսել ենք, ինչպէս մեր ընկերները, գրեթէ ձեռնածալ հանդիսատեսներ, ստոյիկեան հեգնախառն անտարբերութեամբ բացականչել են. „ինչքա՞ն կուզեն թող տքնեն, մեր մասսաները մեզ չեն թողնի“...

Այդ ջինջ ու լաւատես ինքնավստահութիւնը չը պէտք է անվերջ գուրգուրէ մեզ հանգստաւէտ օրորներով,—ժամանակ է ձեռք զարնելու ամենուրեք, մանաւանդ գաւառներում, եռանդուն, ինտելիգենտ պրօպագանդի։ Ունինք արդէն հրապարակի վրայ ուսումնաւարտ երիտասարդների պատկառելի մի պլէադ, գիտական, թէօրիական ծանօթութիւնների բագաժով։ Ուրիշները, համալսարանական նստարանի վրայ, Եւրոպայում, Ռուսաստանում, վաղը կ'երթան ստւարացնելու շարքերը։ Մեր կուսակցական ինտելիգենցիան ևս լինելութեան պրոցէսի մէջ է (im Werden), նաև օրէցօր աճում է, կազմաւորւում և.—կարելի է ասել—նաև համադրւում, ամբողջանում։ Միշտ աւելի միապաղաղ, ներդաշնակ, միշտ աւելի տոգորուած կուսակցական աշխարհահայեացքով։ Զգո՞ւմ են արդեօք մեր ուսանող. ընկերները, որոնք այսօր Եւրոպայի ուսման լաւագոյն տաճարներում ընդունում են գիտութեան ու հասարակականութեան ճառագայթները—զգո՞ւմ են արդեօք, թէ որքան ծանր, բայց և հրապուրիչ, պատասխանատուութիւն է ծանրանում իրենց երիտասարդ գլուխների վրայ... Պատասխանատուութիւն պատմական մեծ վայրկեանի առաջ, ժողովրդի առաջ, կուսակցութեան առաջ։ Մի ահագին օրգանիզմ—թէկուզ միայն մեր կուսակցական օրգանիզմը իր հում, խոպան զանգուածներով—սպասում է նրանց բեղմնաւոր մշակման, աջակցութեան ու գործակցութեան։

Մեծ վայրկեանին—և մեծ սերունդ... Եւ այդ սերունդը թող հեռու մնայ այն շաբլոն ու թեթևսօլիկ մարզանքների գայթակղութիւնից, որ բնորոշում է մի շարք ձախակողմեան ֆրակցիաներին մեր կովկասեան ու հայկական միջավայրում։ Թող հեռու մնայ նրանից յեղափոխական մակերեսային դիլլետանտիզմը և նեղգլուխ ու ֆրազամոլ դօգմայնութիւնը։ Սօցիալիզմը չը հասկանան աղանդի մտքով, դասակարգային պայքարը չը հասկանան նեղ, գռեհիկ և տարամերժ իմաստով։ Ոչ մի դասակարգ չը դարձնեն բացառիկ կուլտի, պաշտամունքի առարկայ, այլ ամբողջ այլազան Աշխատաւոր Ընդհանրութիւնը—բանւորութիւն, իրաւազուրկ գիւղացիութիւն, իրաւազուրկ արհեստաւորութիւն, գաղափարական մտաւորականութիւն—դարձնեն իրենց տիրական մտահոգութեան կենտրոնակէտ։

Քաղաքական ու սօցիալական դաւանանքների աշխարհում՝ պէտք է ներշնչել եւրոպական աղբիւրներից—ոչ ռուսական։ Ռուսները մտաւոր կուլտուրայի մէջ տուել են մեզ անգնահատելի և անմոռանալի դասեր, բայց ռուսական առանձնայատուկ սօցիալիզմը մենք չենք կարող ընդօրինակել։ Նրան պակասում է այն լայն ոգին, այն իրապաշտ ու ամբողջական ըմբռնումը, որ բնորոշում է արևմտեան սօցիալիստներին։ Նրան յատուկ են վտանգաւոր ծայրայեղութիւններ, սօցիալիստական մի տարամերժ աղանդականութիւն։ Այդ վտանգաւոր ծայրայեղութիւններով—որ պակաս դեր չը խաղացին յեղափոխութեան վիժման մէջ—մեղանչում են ռուսական մարքսիստները, համեմատաբար նուազ չափով՝ և սօցիալիստ-յեղափոխականները։ Յեղափոխութիւն և սօցիալիզմ ձուլուում են այնտեղ, ձուլուել են միշտ։ Յեղափոխութիւնը, քաղաքական յեղաշրջումը աներևակայելի, անհնարին է թւում առանց սօցիալիզմի և այդ իսկ պատճառով կռիւների՝ նոյնիսկ ամենասուր տագնապների ընթացքում շատ յաճախ մերժւում է ոչ-սօցիալիստ, բուրժուա-դեմոկրատ հոտուածների գործակցութիւնը։ Մերժւում է, իբրև չարիք, սարսափելի մի պատուհաս, որ կարող է վարկաբեկել պրոլետարիատի, սօցիալիզմի դատը, նրա „կուսական մաքրութիւնը“...

Մեր սօցիալիզմը ընդհանուր ոչինչ չը պէտք է ունենայ այդ ըմբռնումի հետ։ Քաղաքական խեղդիչ ու մահաբեր մթնոլորտում, ազատագրական մեր դժուարին աշխատանքի մէջ՝ չը պէտք է մերժենք աջակցութիւնը, նոյնիսկ ժամանակաւոր դաշինքները, այնպիսի տարրերի, որոնք թէև հակառակ մեր սօցիալական ծրագրին, բայց պատրաստ են գործակցել յանուն ընդարձակ սահմանադրութեան յաղթանակի։ „Բուրժուա“ „կադետ“, մանր-բուրժուա անունները չեն շփոթեցնի մեզ։ Չենք վախենայ „ածականներից“։ Աւելի լաւ է բոլոր բուրժուա-սահմանադրական տարրերի հետ միացած դիւրացնել քաղաքական վերիվայրումը, քան թէ միայն պրոլետարիատի ու նման ուրիշ կուռքերին փարած՝ լողալ անվերջ ռէակցիայի ու ստրկութեան արիւնագոյն ճահճի մէջ։ Եթէ սպասենք, որ քաղաքական յեղափոխութեան յաղթանակի համար Ռուսաստանի բազմամիլիոն աշխատաւոր ընդհանրութիւնը գրկէ գիտակցօրէն Մարքսի կամ Լավրովի աւետարանը, հաւանօրէն պիտի սպասենք շա՛տ երկար... Այդ ճշմարտութիւնը նոր-նոր են կարծես ըմբռնում ռուս սօցիալիստ կուսակցութիւնները, — դառն, աղէտալի փորձերից յետոյ... Եւ մինչդեռ ս.-դ.-ների մի մասը դնում է այժմ իր յոյսերը բուրժուա-լիբերալ տարրերի վրայ, ս.-ր.-ների կենտրօնական օրգանը հետևեալ նշանակալի յայտնութիւնն է անում. („Զնամիա Տրուդա“, օգոստոս 1909 թ.)։

„Որքան էլ սերտ ձուլուած լինին յեղափոխութեան ու սօցիալիզմի գաղափարները մեր աշխարհահայեացքում—այնուամենայնիւ, մեր տակտիկի մէջ սօցիալիզմի և յեղափոխութեան շահերը կարող են երբեմն շատ թէ քիչ շեղուել, տարբերուել իրարից։ Աւելի ճիշտ՝ ոչ թէ առհասարակ յեղափոխութեան, այլ որոշ, տեսակ յեղափոխական շարժման շահերը կարող են շատ թէ քիչ շեղուել սօցիալիզմի շահերից“։

Զգաստ, առողջ ռէալիզմը մի վայրկեան անգամ չը պիտի թողնէ մեզ՝ ազատագրական գործունէութեան մէջ։ Սօցիալիզմի ու տնտեսական ազատագրութեան դրօշակը բարձր պահելով հանդերձ՝ նախ քաղաքական կռուի վրայ է, որ Ռուսաստանի բոլոր դիմադրական կուսակցութիւնները պիտի կենտրօնացնեն իրենց ճիգերը։ Այդպէս է պահանջում իսկական, չը խեղաթիւրուած սօցիալիզմի շահը։ Աւելի ևս։ Երբ չը կայ երկրում յեղափոխական գործօն, կամքոտ ռամկավարութիւն, դեմոկրատիա,—սօցիալիստական բանակը պիտի ստանձնէ մի յայտնի չափով այդ ռամկավարութեան պաշտօնը։ Յեղափոխական կորովի ոչ մի հիւլէ չը պէտք է արհամարհել, դէն շպրտել՝ անգամ յանուն ամենահրապուրիչ ֆօրմուլների ու նշանաբանների—և երբ մենք կանգնած ենք սօցիալիստական ու բուրժուա-դեմոկրատական համերաշխ գործակցութեան որևէ ձեռնարկի հանդէպ՝ յօգուտ քաղաքական յեղաշրջումների՝ մենք դոյնանման պարագաներում չենք ղեկավարւի այն տեսակ նկատումներով՝ թէ արդեօք չե՞նք շեղւում դասակարգային պայքարի ճամբուց, չե՞նք խախտում մեր ծրագրային կուսութիւնը, չե՞նք մթնացնում աշխատաւորութեան դասակարգային գիտակցութիւնը... Եւ մենք չենք, որ կը մեղանչենք սօցիալիզմի դէմ, այլ նրանք, որոնք կը յետաձգեն ու կը վտանգեն քաղաքական յեղափոխութիւնը այդպիսի ճղճիմ մտահոգութիւններով։ Սօցիալիզմը մեղաւոր չէ, որ ռուսական կուսակ-

ցութիւնները հասցրել են նրա վարդապետութիւնը ծայրայեղ սխեմացման, յաճախ նոյնիսկ կարիկատուրի, հասցրել են նեղ, անհամբերող ու աղանդապաշտ դոգմայնութեան, ուր արհամարհւում ու կատաղութեամբ դէն է շպրտւում—անգամ երկունքի տագնապներում—այն ամենը, ինչ որ դուրս է „դասակարգային շրջանակներից“...

Դասակարգերի կռիւն, անշուշտ, ամենազդու, ամենաիրական միջոցն է՝ սոցիալիստական հասարակութեան կարգերն իրագործելու համար և այդ նպատակով ամենուրեք ու յարաժամ կազմակերպւում են աշխատաւոր զանգուածները. բայց սոցիալիզմի գաղափարը լայն է, նա չի ընդունում աղանդներ, չի հանդուրժում—մանաւանդ յետամնաց, բռնակալական երկրներում—ազատագրական շարժումների նեղ, տարամերժ ըմբռնումը. Նրա ձգտումն է՝ ոչնչացնել ստրկութեան ու կեղեքումի բոլոր ձևերը, նրա նպատակն է—նոյնիսկ մարքսեան արտայայտութեամբ—ոչ միայն մէկ առանձին դասակարգի, այլ բովանդակ մարդկութեան ազատագրումը քաղաքական, տնտեսական, կրօնական, ազգային ու այլ կապանքներից. սոցիալիզմը վաղուց նոյնպէս հրաժեշտ է տուել ուտօպիական զառանցանքներին, վաղուց իջել է մետաֆիզիկայի ամպամած բարձունքներից դէպի առօրեայ իրականութեան խորշերը. Նա գիտէ, որ մարդկային բարդ ու հարուստ գոյութիւնը իր բիւրաւոր հանգոյցներով չի կարող պարփակուել մէկ ֆորմուլի շրջանակներում, նա գիտէ, որ իր փշոտ, առաքելական ճանապարհի վրայ՝ ստիպուած է առհասարակ լինել ռէալիստ, իրապաշտ, ստիպուած է հաշուի առնել իրականութեան բոլոր ահաւոր խորդ ու փոսերը, սպասաւորել իր իդէալներին տարբեր, այլազան սիստեմներով, կռւի տարբեր մեթօդներով—նայած տեղին ու ժամանակին—գնալ յաճախ ծուռ, զարտուղի ճանապարհներով, գնալ քայլ առ քայլ, աստիճանաբար, զատել հեռաւոր և մերձաւոր նպատակները, չեշտել հրատապ, այժմէական պօստուլատները, որոշել իրագործելին ու իդէալականը, ձեռք տալ յաճախ այնպիսի տարրերի, որոնք միանգամայն ներդաշնակ չեն իր ջինջ, պայծառ էութեան հետ, օգտուել գալոց յաղթանակի համար այն բոլոր ուժերից, որ իրականութիւնն ընձեռում է իրեն, շահագործել բոլոր ըմբոստ գործօնները, յեղափոխական կրակի անգամ ամենաթոյլ արտայայտութիւնները—երբ, մանաւանդ, հարկաւոր է նուաճել մարդկային ամենատարրական իրաւունքները, քաղաքական ազատութեան առաջին հանգրուանը, առանց որի անհնարին է և սոցիալական բնականոն առաջադիմութիւնը...

Այդպէս է ճշմարիտ, չը խեղաթիւրուած սոցիալիզմը. այդպէս է նրա ձևակերպումը միջազգային կոնգրէսներում։ Եւ այդ իրապաշտ ըմբռնումից չուելով է, որ ինտերնացիօնալը հրահանգում է իւրաքանչիւր երկրի տարբեր, հակամարտ սոցիալիստ հատուածներին՝ միանալ ի մի ներդաշնակ աշխատաւորական, սոցիալիստական բանակ։ Մի հրահանգ, որ, աւա՜ղ, մեզ մօտ, Ռուսաստանի մէջ, հնչում է, որպէս անապատում...

Երբ մեր ինտելիգենտ ընկերները կ'ազատագրուէին ռուսական առանձնայատուկ ըմբռնումների ազդեցութիւնից և կը ներշնչուէին արևմտեան այդ առողջ ռէալիզմով — առանց յախուռն ու ծայրայեղ թռիչքների դէպի ձախ, առանց դոգմային գլխապատառ յափշտակութեան, բայց և առանց ծոյլ ու անգոյն պատեհապաշտութեան—երբ մենք կունենանք մի քանի տասնեակ ժիր, ձեռնհաս, երիտասարդ գլուխներ, լուրջ ու խորունկ պատրաստութեամբ, որ կը մտնեն մեր իրականութիւնը, մեր կազմակերպութեան շարքերը պրօպագանդիստի, ղեկավարի պաշտօնով, որ կ'երթան պայքարելու մոլար ու խակ գաղափարների, դոգմայական նախապաշարումների դէմ, հնչեցնելով միաժամանակ սոցիալիստական ու ռամկավարական համերաշխութեան շեփորը,—ոչ միայն մեր կուսակցական շարքերը կ'ամրապնդուէին ու կ'ապահովուէին միանգամ ընդմիշտ այլասերումից, ոչ միայն մեր զանգուածները գիտակցական, աստիճանական զարթնումի մէջ աւելի ջերմ կը փարէին մեր դրօշակին, այլ և թարմ ու առողջ մթնոլորտը կը թագաւորէ մեր երկրում, կը վերանայ մեր հօրիզօնից մեղկ ու ճոռոմ ֆրազէօլօգիայի մառախուղը, որ երէկ, քաղաքական տագնապների ու հայ ժողովրդական զուլումների միջոցին իր անբան հակառակորդութեամբ այնքա՜ն թունաւորում էր մեր տրամադրութիւնը...

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՄԵՆԱՄԱՐՏ

(ԺՈՂՈՎՈՒՐԴ ԵՒ ԱԶՆՈՒԱԿԱՆՈՒԹԻՒՆ)

Ահա՛ մարդիկ, որոնց բախտը ամէն բան ընծայել է եւ որոնք, սակայն, զլանում են իրենց հսկայական առատութիւնից մի չնչին բաժին հանել՝ հովանաւորելու թշուառութեան ու յուսահատութեան սարսափների դէմ՝ նրանց (աշխատաւորներին), որոնք ստեղծել են այդ հարստութիւնները...

ԼԼՕՅԴ ՋՕՐՋ
Անգլ. ֆինանս. մինիստր

Անգլիան ծայրէ ծայր բռնուել է քաղաքական մի անօրինակ տագնապով։ Վաղուց, դարերից ի վեր՝ այդ զգօն, ծանրաբարոյ, հաւասարակշռուած, մեծ ազգը չի ապրել այսպիսի խորունկ ցնցումներ և երբէք բրիտանական պարլամենտը վկայ չի եղել այդքան բուռն ու մոլեգնոտ ճառերի, ծափահարութիւնների։

Դասակարգերն ու քաղաքական կուսակցութիւնները —թէև խիստ զտուած այդ երկրի մէջ—չեն մտնում

առհասարակ այնպիսի սուր հակամարտութիւն, չեն արտադրում՝ այնպիսի ուժգին բաղխումներ, ինչպէս եւրոպական ցամաքի վրայ։ Սոցիալական առաջադիմութիւնը գնում է սովորաբար խաղաղ, չափաւորուած տեմպով, առանց ոստիւնների ու թռիչքների — և այդ պատճառով բուրժուա-սոցիալիստներից, հասարակագէտներից ոմանք հաշակում են անգլիական էվոլիւցիան, իբրև „նորմալ“, բնականոն, հետևապէս՝ ընդօրինակելի, իսկ ցամաքայինը (գլխաւորապէս ֆրանսիականը), իբրև „անորմալ“, անբնականոն, հետևապէս՝ դատապարտելի... Սիրում են բուրժուազական իդէալիստները Անգլիայի այդ խաղաղ, հաւասարակշռուած տեմպը, որի մէջ տեսնում են ռէվոլիւսիոնի բացասումը և էվոլիւսիոնի դրական։ Մոռանում են, որ այդ խաղաղասէր երկիրը ևս ունեցել է յայտնի վայրկեաններում իր բուռն տագնապները, որ այդ „պահպանողական“ ժողովուրդը ևս ունեցել է իր խելագար ժամերը, մոռանում են, որ, եթէ Ֆրանսիայում մի ժամանակ ազատութիւնը յաղթանակել է Լուդովիկոս XVI-ի գլխատումով, ապա զգօն ու պաղարիւն անգլիացիք ևս չեն վարանել — նոյն ազատութեան յաղթանակի համար - մահուան սոսկալի մեքենային յանձնել իրենց թագաւոր Կարլոս I-ին..

Ճիշտ է սակայն, որ մի քանի կղզիացած ժեստերից դուրս՝ Մեծ Բրիտանիայի քաղաքական ու հասարակական զարգացումն ընթացել է խաղաղ, աստիճանական բարեփոխումներով, ընդհանրապէս անարիւն „էվոլիւցիայի“ օրէնքով։

Եւ այդ ճանապարհով հսկայական նուաճումներ է արել բրիտանական ժողովուրդը։ Պարլամենտական կարգերը այն աստիճան առաջ են գնացել, որ նախանձի առարկայ են բոլոր խոշոր ցամաքային պետութիւնների համար. անհատի անձեռնմխելիութիւնը, քաղաքական իրաւունքները—խօսքի, մամուլի, գումարումի, դաւանանքի, գործադուլի ազատութիւնները—այնպիսի ընդարձակ չափեր են առել, որ անգամ Շվեյցարիան դեռ չի իրագործել։ Թագաւորի իշխանութիւնը հասցրուել է կղզոր զէրոի,— իշխում է, առանց կառավարելու—ժողովրդի միահեծանութիւնը հաստատուել է անսասան կերպով—չը նայած ընտրական իրաւունքի սահմանափակման—և պարլամենտի լիազօրութիւնը այնքան ընդարձակ է, որ դարձել է առասպելական։ „Անգլիական պարլամենտը ամեն բան կարող է, բացի մի սեռը միւսին վերածելուց“—այսպէս է ձայնում մի ընթացիկ ասացուածք։

Չը նայած, սակայն, դեմոկրատիզմի, ժողովրդապետական սկզբունքի այդքան խոշոր առաջադիմութեան, դեռ մինչև օրս պահպանուում են այդ զարմանալի երկրում միջնադարեան մի շարք սովորութիւններ ու հաստատութիւններ, որոնցից հին, գիշատիչ, աւատապետական հասարակակազմի հոտն է բուրում.. Դրանցից ամենախոշորը լորդական պալատն է, „բարձր պալատը“, որի հանդէպ իսկական պարլամենտը կոչւում է „ստորին պալատ“։ Մի դասակարգ, որ վաղեմի ֆէոդալականութեան պէս, գրաւել է երկրի հսկայական ու լաւագոյն հողերը, և որ պահպանում է տնտեսական հպատակութեան մէջ միլիոնաւոր գիւղացիական ընդհանրութիւնը, — նա շեշտուում է կեանքի բոլոր ասպարէզներում, ուզում է շեշտել նաև քաղաքական իշխանութեան յաւակնութիւններով։ Լորդերի դասակարգն է։ Հողային և փողային արիստոկրատիան, ազնուականութիւնը։

Մի տեսակ հակասութիւն է հնչում... այդքան դեմոկրատիկ մի երկիր և միանգամայն այդ աստիճան արիստոկրատիկ։ Մի երկիր, որ 13-րդ դարից իվեր, ամենից առաջ, ամենից ամուր գրկել է սահմանադրական ազատութեան դրօշակը — և ահա լորդերի առանձնաշնորհեալ կաստը 20-րդ դարում, իր կատարեալ շքի, պերճանքի ու ազդեցութեան մէջ.. Որպէս մի անախորժ ժամանակավրէպ..

Դա անգլիական առանձնայատուկ պատմութեան գաղտնիքն է։ Արդարև, պահպանել են մի շարք հին, միջնադարեան ազնուապետական առանձնաշնորհումներ. անգլիացու հոգեբանութիւնը չափազանց զգայուն է առհասարակ դէպի „հին, բարի ժամանակներից“ մնացած աւանդութիւններն ու հաստատութիւնները. ոչ մի ժողովուրդ անգլիացու չափ գերի չէ սովորութեան ու աւանդութեան. հինը նիւթական է, երբեմն գրեթէ պաշտամունքի առարկայ. այդպէս՝ միապետութեան հաստատութիւնը և թագաւորի անձնաւորութիւնը։ Անգլիացին (միջին անգլիացին) ջերմապէս սիրում է նրանց, պատրաստ է գուցէ պատնէշներ բարձրացնել նրանց անունով.. թէև միևնոյն ժամանակ նա խնամքով —վիրաւորելու աստիճան—կը թալանէ այդ հաստատութիւնները. կը խլէ միապետի բոլոր էական ստորոգելիները և մի նշանախեց անգամ չի զիջի նրան իր իրաւունքներից։ „Թագաւորը միայն թագաւոր է“.. Իսկ երկիրը կառավարողը ժողովուրդն է՝ իր ամենազօր պարլամենտով, իր ամենազօր ներկայացուցիչներով, որոնք ուղղութիւն են տալիս մինիստրներին, դահլիճներին, տապալում են նրանց իրենց բարեհայեցողութեամբ։

„Հակադրութիւնները“ հաշտուել են դարեր շարունակ, ապահարզանի խօսք չի եղել, հնի ու նորի, ժողովրդապետական ու ազնուապետական սկզբունքների միջև.—այդ խօսքը նոր է հնչում, Գլադստոնի ժամանակից ի վեր—և այսօր նա հնչում է թունոտ ու սպառնագին..

Մինչև օրս, պէտք է ասել, ազնուապետական սկզբունքը Անգլիայի մէջ ցոյց է տուել յարմարումի մեծ կարողութիւն, շատ աւելի մեծ, քան ցամաքային պետութիւնների ազնուականութիւնը։ Քաղաքական էվոլիւցիայի ղեկը նա զիջել է պարլամենտին, „ստորին պալատին“, իսկ ինքը, յանձին լորդական „բարձր պալատի“, շարունակել է լոկ ձևական, անուանական իշխանութիւն։ Պարլամենտը օրէնքներ է սահմանել, պարլամենտը յօրինել է միշտ բիւջէի, ելևմուտի ծրագիրներ, լորդերի պալատը տուել է միայն իր սոսկ ձևական հաւանութիւնը։

Լորդերը համակերպել են, յաճախ նոյնիսկ ցոյց են տուել քաղաքական ողջմտութիւն, ազատամտութիւն, չեն ձգտել ոտնահարելու մարդկային տարրական իրաւունքները այն կոպիտ ու վայրագ ամբարտաւանութեամբ, որ յատկանշում է ցամաքային ազնուականութեանը (Գերմանիա, Աւստրիա, Իտալիա, Ռուսաստան)։

Լորդերը համակերպել են, քանի ազատութեան

սկզբունքը շարժել է միայն, այսպէս ասած, քաղաքականութեան հորիզոններում, նրանք թշնամաբար չեն վերաբերուել նոյնիսկ մի շարք սոցիալական բարենորոգումներին, որոնք վաղուց ի վեր քննարկուել են բրիտանական պարլամենտում և նպատակ են ունեցել՝ փոքր ինչ բարձրացնել աշխատաւոր դասակարգերի նիւթական ու հոգեկան վիճակը։

Բայց ահա խփեցին լորդերի գրպանին... Ահա պարլամենտը ընդունեց—ճնշող մեծամասնութեամբ—բիւջէի մի օրինագիծ, որ սպառնում է փոքր ինչ սահմանափակել խոշոր հողատէրերի, լանդլորդների դիզելիք „յաւելեալ արժէքի“ շտեմարանը։ Եւ մէկէն ի մէկ տրամադրութիւնը յեղաշրջուեց, լորդական դասակարգն ալէկոծուեց ու ճչաց. Veto! (արգելո՛ւմ եմ)։ Եւ արգելքը դրուեց... Լորդերի պալատը չը վարուեց ըստ սովորականին, նա մերժեց իր „բարձր“ հաւանութիւնը պարլամենտական որոշումին։

Բայց դա ի՞նչ արգելք էր... Զգում էին, անշուշտ, այդ գոռող կրեսոսներից շատերը, թէ ինչ վտանգաւոր խաղ էին խաղում, զգում էին թերևս, որ իրենց ձեռքով իրենց սեփական գերեզմանն են փորում։ Գլադստոնի օրերից ի վեր, ատելութիւնը դեմոկրատական խաւերի մէջ միշտ աւելի և աւելի սաստկանում է դէպի „բարձր պալատը“ և նրա իսպառ վերացումը կարճ ժամանակի խնդիր է։

Լորդերը իրենց սեփական նախաձեռնութեամբ գուցէ փութացրին այդ վայրկեանը։

Խնդիրը դուրս է գալիս բրիտանական շրջանակներից և դառնում է համաեւրոպական. նրանով շահագրգռուած են երկու հակամարտ տարրերը բոլոր երկրներում.

— Ժողովուրդ և ազնուականութիւն։

— Աշխատանքի ու քրտինքի բանակ և փողի ու շահագործման բանակ։

Ի՞նչ ասել կուզէ, որ լորդերի կողմն են համակրանքները բոլոր ոչ միայն զուտ ազնուական դասակարգերի, այլ և առհասարակ բոլոր փառած, պահպանողական, հակաժողովրդական տարրերի՝ Լոնդոնից մինչև Բերլին, մինչև Պետերբուրգ, մինչև, թերևս, Բոսֆորի ափերը։ Չէ՞ որ, վերջապէս, գրեթէ բոլոր պետութիւնների մէջ կայ այդ հռչակաւոր „բարձր պալատը“, այդ „իմաստուն“ ծերակոյտը, մի տեղ ընտրովի—սահմանափակ ընտրական իրաւունքով—մի այլ տեղ սոսկ նշանակովի, և ամեն տեղ՝ սպառնալիք ազատութեան ու ռամկավարութեան համար...

Ի՞նչ են ասում լորդերը։ Խիստ ուշագրաւ է նրանց պատճառաբանութիւնը։ Որպէսզի գայթակղութիւնը չը լինի չափից դուրս արտառոց ու ըմբոստեցուցիչ — նրանք ամենայն զգուշութեամբ „խնայում են“ ժողովրդական սկզբունքը. նրանք կոչ են անում փարիսեցիօրէն... նոյնպէս ժողովրդին։ Բայց աւելի ուշագրաւն այն է, որ նրանք հրապարակ են հանում սոցիալիզմի ուրուականը։

„Այդ բիւջէն սոցիալիստական է, ասում են նրանք. դա սոցիալիզմի ճնշման արդիւնքն է և մենք կուռում ենք պարլամենտի սոցիալիստական ձգտումների դէմ“..

Սոցիալիստական—որովհետև ազատամիտ կառավարութիւնը ի նկատի ունի՝ նոր բիւջէով հաւաքուած տուրքերի մի մասը ծառայեցնել բանուորական, տնտեսական բէֆորմների, յատկացնել միլիոնաւոր թշուառների վէրքերը կապդուրելուն...

Որ „սոցիալիստական ճնշումն“ այդտեղ որոշ դեր ունի—տարակոյս չը կայ։ Ո՞ր երկրում չէ աշխատաւորական օրէնսդրութիւնը, բուն ժողովրդական, տնտեսական բէֆորմները՝ սոցիալիզմի ճնշման արդիւնք։ Եթէ Բրիտանիայում վերջին ժամանակներս սոցիալիստական կուսակցութիւնը արած չը լիներ այնքան խոշոր առաջադիմութիւններ, եթէ աշխատանքի ներկայացուցիչները վերջին ընտրութիւններից յետոյ տասնեակներով չ՚երթային բազմելու պարլամենտի մէջ, եթէ չը լիներ Մակդոնալդների, կեր Հարդիների անդադրում ու կորովի արշաւանքը պատգամաւորական ժողովի մէջ և նրանից դուրս, եթէ սոցիալիզմի պրոպագանդը չը գտնէր այնքան ջերմ համակրանք ու կողմնակցութիւն ամբողջ երկրում,—այդ բիւջէն, գուցէ, հանդէս չը գար։ Սոցիալիզմը կարող է այն համարել մասամբ իր յաղթանակ։

Ի՞նչ զարմանք։ Իր գովելի, պատկառելի առաջադիմութեամբ քաղաքական ազատութիւնների աշխարհում՝ այդ երկիրը մնացել է դարձեալ խորթ հայրենիք իր բազմամիլիոն զաւակների համար, որոնք մատնուած են — քաղաքներում ու դաշտերում — սև, չարքաշ, անշնորհակալ աշխատանքի։ Հարիւր հազարաւոր աշխատազուրկ պրոլետարիատը միայն Լոնդոնում—վաղուց սովորական երևոյթների շարքն է անցած։ Կապիտալիստական շահագործումը — մանաւանդ դաշտերում, լենդ-լորդների հսկայածաւալ հողերի վրայ—առաջ է մղում նոյնքան վայրագ ու սպանիչ ձևով, ինչպէս ամենուրեք։

Անգլիան ամենապերճախօս օրինակն է, որ ցոյց է տալիս կապիտալիզմի ճակատագրական էութիւնը։ Այդ օրինակի վրայ մենք տեսնում ենք, որ քաղաքական ամենալայն, ամենադեմօկրատիկ ազատութիւնները անգամ չեն կշտացնում աշխատաւոր մարդուն, որ դասակարգերի ու շահերի խորունկ անհաւասարութիւնը, հարստութիւնների ծայրայեղօրէն անարդար բաշխումը՝ շարունակւում են նաև ազատ ու դեմոկրատիկ բէժիմների տակ և որ, հետևապէս, իրաւունք ունի սոցիալիզմը, երբ նա ասում է՝

— „Բաւական չեն քաղաքական յեղափոխութիւնները ու ազատութիւնները. միլիոնաւոր քաղցած ու կիսաքաղց ընդհանրութիւնը չի վայելում այդ ազատ կարգերը, տէր նրան և նրա ընտանիքին նախ և առաջ ապրուստի միջոց, տէր իրական ազատութիւն ու հաւասարութիւն“։ Իսկ այդ իրականը կը գայ միայն այն ժամանակ, երբ ամբողջ հողը, արդիւնաբերութեան բոլոր գործիքներն ու հարստութիւնները կը տրուին աշխատաւոր ժողովրդի ձեռքը, իբրև ընդհանուր, համայնական սեփականութիւն։

Ի՞նչ են ասում „սոցիալիստական բիւջէի“ պաշտպանները, կառավարութիւնը, պարլամենտը։ Ի՞նչ է պահանջում այդ նոր բիւջէն։ Դա պատճառաբանում է, որ պետութիւնը հսկայական ծախքեր ունի, որ նրանք օր աւուր աճում են, մասնաւորապէս ազգային պաշտպանութիւնն ապահովելու համար, որ այդ ծախքերին գոհացում պէտք է տալ, որ ժողո-

վուրդը շատ է արդէն ծանրաբեռնուած այլ և այլ տուրքերով և որ, հետևապէս, նոր տուրքերը պէտք է գանձւին ի հաշիւ մեծ ժառանգութիւնների, մեծ հողատէրերի հարստութեան ու եկամուտի, պէտք է ապա յարկացւին մասամբ նաև աշխատաւոր ու տառապող զանգուածների ճակատագրի բարելաւման։

Զրկւո՞ւմ են լորդերը իրենց հարստութիւնից, կորցնո՞ւմ են նրանք իրենց վիթխարի հողային պետութիւնը, իրենց պերճանքն ու վայելքները։ Ամենևին։ Բայց դարձեալ վայնասուն... Ժողովրդական քրտինքով յղփացած այդ սակաւաթիւ դասակարգը դարձեալ ուզում է—իր մի քանի հարիւր նշանակովի ներկայացուցիչների բերանով—կաշկանդել որոշումները մի պարլամենտի, որ հանդիսանում է միակ ժողովրդական, պատգամաւորական մարմինը։

Փոթորիկը բռնել է երկիրը։ Կեանքի միապաղաղ ընթացքը խզւել է և կրքերը բորբոքւել են, ինչպէս երբէք։ Ազգուիտ, ազատամիտ կառավարութեան գլուխը, ծանուցեց արդէն ի լուր Բրիտանիայի և ամբողջ աշխարհի, որ „լորդերը խախտեցին սահմանադրութիւնը“։ Պարլամենտը կը լուծւի—այդպէս է պահանջում ստեղծւած կացութիւնը—երկիրը կը կոչւի շուտով նոր ընտրութիւններ կատարելու և դրանով իսկ իր վճռական խօսքն ասելու լորդերի véto-ի առթիւ։ Այդ խօսքն, անշուշտ, կ՚արտասանւի յօգուտ ազատամիտ կառավարութեան և ընդդէմ նրա ոխերիմ հակառակորդների—լորդերի։ Դա Վիգի ու Տօրիի հռչակաւոր, պատմական մենամարտն է, որ խաղացւում է այսօր մի նոր ու դրամատիկ արարւածով... Լորդերի կողմն է, ի՞նչ ասել կուզէ, անգլիկան հզօր եկեղեցին։ Ո՞րտեղ չէ եկեղեցին հարուստների ու կեղեքիչների կողմը... Մինիստր-նախագահի արձակած նշանաբանը այսօր շրջան է անում, ցնցելով ու ոտքի հանելով ժողովրդային զանգուածներին։ Տեղի են ունենում հսկայական միտինգներ, հրապարակը հեղեղւում է կոչերով ու մանիֆէստներով։ Այդ անսովոր ագիտացիայի մէջ առաջնութեան պսակը պատկանում է դարձեալ, ի հարկէ, սօցիալիստներին։ Labour Party-ն (Աշխատաւորական կուսակցութիւնը) իրօք միակն է, որ հանելով կացութիւնից տրամաբանական բոլոր եզրակացութիւնները, պահանջում է իր հրատարակած մանիֆէստի մէջ՝ վերացնել լորդերի պալատը, գրաւել լորդական բոլոր հողերը և դնել նրանց ժողովրդի հաւաքական տրամադրութեան տակ (Nationalisation)...

Մի քանի հարիւր կալւածատէրեր—միլիօնաւոր ժողովրդի դէ՛մ... Յանդգնութիւնը, տարակոյս չը կայ, չարաչար կը պատժւի և գուցէ իրօք „լորդերի պալատը“ կը գահավիժւի իր վսեմափայլ բարձրութիւնից դէպի անդարձ անէութիւն։ Եւ դա թերևս սկիզբ կը դնէ ուրիշ, նման գահավիժումների։ Անգլիան առաջինն է ծանուցել աշխարհին պարլամենտարիզմի մեծ սկզբունքը և Անգլիան գուցէ պիտի տայ նաև ազդանշանը Ծերակոյտների համատարած բնաջնջումի...

ՀԱՄԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ

VI

ԲՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱԶԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊՐՕՑԷՍՈՒՄ

Բնութիւնը—նախ և առաջ։

Մօնտեսկիօ և Հերդեր, իսկ նրանցից շատ առաջ, հնադարեան հանճարները՝ Պլատոն, Արիստոտել շեշտել են բնական միջավայրի հզօր դերը ժողովուրդների կազմաւորման պրօցէսի մէջ։

Աշխարհագրական դիրքը, հողի գծագրութիւնն ու քաղադրութիւնը, լեռներն ու հարթութիւնները, ծովերն ու գետերը, կլիման, օդերի ջերմութիւնն ու խոնաւութիւնը, ջրերի բաշխումը, բուսական ու կենդանական աշխարհը, բերքերի առատութիւնն ու սակաւութիւնը, հաղորդակցութեան դիւրութիւններն ու դժւարութիւնները—այդ բոլորը, կարելի է ասել, իսկզբանէ որոշել է այլևայլ մարդկային համախմբումների ճակատագիրը, ցոյց է տւել ժողովուրդներին այն ուղիները, որոնցով նրանք պէտք է քայլէին անհրաժեշտաբար՝ գաղթերի ու բաղխումների յաւիտենական յորձանքի մէջ։

Ո՛րպիսի հսկայ այլազանութիւն գործօնների ու ազդեցութիւնների... Այդտեղից էլ—անսահման այլազանութիւնը ազգային ճակատագիրների։ Երբեմն սոսկ աշխարհագրական դիրքը ահագին լոյս է սփռում մի ազգի գոյութեան դարաւոր ելևէջների վրայ, մեկնաբանում է նրա հզօր ծաւալումների կամ նրա անզօր կծկումների գաղտնիքը... „L'Angleterre est une île. et ceci explique toute son histoire“, ասում է հռչակաւոր պատմագիր Միշլէ. „Անգլիան կղզի է—և դա բացատրում է նրա ամբողջ պատմութիւնը“... Ամբողջը՝ ոչ, ի հարկէ—քանի՛ կղզիներ են կուլ գնացել ժամանակի ալիքներին—բայց անտարակոյս, բրիտանական կղզիացումը իրօք վճռական դեր է խաղացել այդ երկրի մեծութեան, հմայքի, նրա տիեզերական նւաճումների պատմութեան մէջ... Միշլէի խօսքը չէ՞ր լինի արդեօք անալօգիայով ու մօտաւոր ճշտութեամբ կիրառել նաև Հայաստանի վերաբերմամբ... Թւում է թէ այնտեղ ևս աշխարհագրական դիրքը գլխաւոր աղբիւրն է այն բոլոր դրամատիկ իրադարձութիւնների, բացասական ու դրական հոսանքների, բարիքների ու նզովքների, որոնցից հիւսւել է դարերի մէջ հայկական եզակի ճակատագիրը...

Իրաւ է, բնական միջավայրի ներգործութիւնը յաւիտենական ու անփոփոխելի մի մեծութիւն չէ։ Աշխարհագրական պայմանները չեն հանդիսանում, մի տեսակ ֆատալ, ճակատագրական, բռնաւոր ուժ ամբողջ մարդկային պատմութեան ընթացքում—նրանց ազդեցութիւնը տիրական է միայն մարդկութեան մանուկ հասակում, նախապատմութեան մէջ, էւօլիւցիական սանդուխի ամենաստոր աստիճանների վրայ, երբ մարդ-էակը իր խոպան մտքով ու հսկայական, ահաբեկւած երևակայութեամբ, իր բութ գործիքներով ու ողորմելի տնտեսութեամբ՝ եղել է արգահատելի մի խաղալիկ բնութեան կոյր տարերքների ձեռքում, երբ նա ստրուկ իր անմիջական կարիքների, մերկ ու կիսաքաղց՝ թափառում էր տիեզերական լաբիւրինթոսում, կրում էր շրջապատի բոլոր հարւածները, առանց հակազդել կարողանալու, փախչում էր զարզանդուած դիշատիչ գազաններից, կծկւում, գալարւում էր կայծակի հանդէպ, փոթորկի, ուրագանի միջոցին վազում էր լեռնապատառ, առանց յետ նայելու, տարւած սարսափի միահեծան զգացումով...

Աստիճանաբար առաջադիմելով, աշխատանքի ու արդիւնաբերութեան միջոցները հետզհետէ կատարելագործելով, մարդիկ հակազդում են իրենց շրջապատող միջավայրի դէմ, ազատագրւում են կամաց-կամաց բնական ուժերի կոյր, անողոք ֆատալիզմից, մեղմում են նրանց մոլեգնութիւնը, յաճախ նոյնիսկ վնասակար, աղէտաբեր տարերքներից ստեղծում են դրական, աշխարհաշէն գործօններ։ Մի գետ, որ

պարբերաբար դուրս է նետում իր հունից, ողողելով ու աւերելով ահագին տարածութիւններ—նա յետոյ կարող է դառնալ մարդկային հնարագիտութեան շնորհիւ՝ նաւարկութեան ու առեւտրի մի գերազանց ճանապարհ և ազգային գոյացումի պատկառելի մի գործօն։ Մի լեռ, որ երկար ժամանակ անանցանելի և ահաւոր անջրպետ է մարդկային այլեւայլ համախմբումների միջև՝ կը դառնայ յետագայում—նոյն արգաւանդ աշխատանքով, յեռնային ճանապարհներ հաստատելով — հաղորդակցութեան մի շահաւէտ անցք, կրճատող տարածութեան ու ժամանակի, շաղկապող անջատուած ժողովուրդների։

Հաղորդակցութեան դիւրութիւնները, ծովերի, մեծ, նաւագնաց գետերի գոյութիւնը ամենաբեք զարկ է տուել մարդկանց և ապրանքների փոխադրութեան, շարժումներին. իսկ յայտնի է, որ ապրանքների փոխանակութեան հետ կատարուել է շարունակ մարդկային այլազան համախմբումների միջև՝ մ տ ք ե ր ի փոխանակութիւնը ես, որ զօրաւորագոյն խթանն է կուլտուրայի առաջադիմութեան։ Անտարակոյս, պատահական մի հանգամանք չէ, որ մեծ ազգային քաղաքակրթութիւնները սկիզբ են առել մեծ գետերի աւազաններում, մեծ ծովերի եզերքներում։ Գանգեսը Հնդկաստանում, Նեղոսը Եգիպտոսում, Եփրատն ու Տիգրիսը Միջագետքում եղել են հզօր զարկերակները առաջին մեծ քաղաքակրթութիւնների—հնդկական, եգիպտական, ասորական եայլն։

Հին աշխարհի բոլոր ցեղերը—ասում է նրանց պատմագիր Լենօրման—Նեմրութից մինչև Մահմեդ՝ հանդիպել են յաջորդաբար Եփրատի ու Տիգրիսի ալիքներով ողողուած այդ հսկայ օվազխում, Միջագետքում, որ կոչուել է իրաւամբ Ասիայի պարտէզ, դրախտ։ Այդտեղից նրանք ձգտել են, անհարկու մրցակցութեամբ, տիրել ամբողջ Ասիային։ Ոչ մի ժողովուրդ հնում այնքան չի զարգացրել երկրագործական արուեստն ու այլ ինդուստրիաներ, ինչպէս ասորեստանցիք. բնութիւնը ինքը պատրաստել էր այդտեղ նպաստաւոր հողը առաջին ազգութիւնների կազմաւորման համար։

Հապա Մ ի ջ ե ր կ ր ա կ ա՞ ն ը... որ ունեցել է եւրոպական քաղաքակրթութեան փթթման համար վճռական կարևորութիւն։ Արդեօք արևմտեան պանծալի կուլտուրաները կը ստեղծուէի՞ն, եթէ այդ ծով-ովկիանը չ՚ողողէր Եգիպտոսի, Փիւնիկիայի, Փոքր-Ասիոյ, Յունաստանի, Իտալիայի, Սպանիայի և Ֆրանսիայի եզերքները.. Առանց այդ մեծ ազդակի, որ չափաւորում, բարեխառնում էր կլիմաները և անսահման դիւրացնում հաղորդակցութիւնը, չէր առաջանայ—կամ շատ ուշ—միացումը երեք խոշոր ցեղագրական տարրերի՝ Եւրոպայի, Ասիայի, Աֆրիկայի՝ ի դէմս արիացիների, սեմիտների ու բերբերների։

Անթիւ դարեր Միջերկրականը մեծ ճամբան էր ժողովուրդների հաղորդակցութեան,—արևմտեան, արևելեան ու հարաւային ժողովուրդների։ Առևտուրը, ապրանքները շարժւում էին Արևմուտքից, ծովի վրայով, հասնում էին ասիական եզերքներին, ապա շարունակւում կ ա ր ա ւ ա ն ն ե ր ի գ ծ ե ր ո վ, Կովկասի, Հայաստանի վրայից՝ դէպի Պարսից ծոց, Հնդկաստան ու Չինաստան։ Միջին դարերում, ասում է Ռեկլիւ, ջենօվացի վաճառականները անցնում էին Սև ծովի եզերքներից, մտնում էին Անդրկովկասի խորքերը, հասնում մինչև Կասպից ծով։ Եւ միաժամանակ եւրոպացի ճամբորդները, մանաւորապէս իտալացիք, երթևեկում էին Փոքր Ասիայի գծերով...

Եթէ Հայաստանը փռւած չը լինէր հին աշխարհի միջազգային հաղորդակցութեան այդ մեծ ճանապարհի վրայ, մենք ես, անտարակոյս, չէինք ունենայ 3-րդ, 4-րդ դարերում արդէն՝ պատկառելի քաղաքակրթութիւն։ Հայ տարրը չէր ստանձնի, հաւանականօրէն, ոչ մի կուլտուրական ինիցիատիվ, նախաձեռնութիւն—և Մեսրոպների ու Սահակների, Եղիշէների ու Եզնիկների հ ա յ ր ե ն ի ք ը թերևս չէր կազմակերպուէր... բայց այդ մասին յետոյ։

Ահա և Փիւնիկեան։ Առաջին և պանծալի ազգութիւններից մինը, որ աւա՛ղ շատերի պէս չքացել է գրեթէ առանց հետք թողնելու։ Ծովը—նոյն Միջերկրականը—դարձրեց փիւնիկեցիներին հին աշխարհի լաւագոյն և երկար դարեր շարունակ՝ միակ նաւագնաց ժողովուրդը։ Ծովային լայն առևտուրը և ուրիշ ինդուստրիաներ առեղծեցին միաժամանակ Փիւնիկիայից քաղաքակիրթ մի ազգութիւն, որ միջնորդ էր Ասիայի ու Եւրոպայի միջև, որ յօրինեց գ ի ր, ա յ բ բ ե ն, հնարեց դ ր ա մ ը, հիմք դրեց բազմաթիւ ք ա ղ ա ք ն ե ր ի, զարկ տուեց ամենաբեք առևտրական ինիցիատիվի, տարածեց իր մտքի ու արուեստի արդիւնքները ամբողջ Միջերկրականի աւազանում... Ուղղակի կամ անուղղակի նրանք հասան նաև Հայաստան։ Արդարև, երեք գլխաւոր գծերով էին մղում փիւնիկեցիք իրենց առևտուրը.

1. Հարաւային կամ արաբա-հնդկական.
2. Արևելեան կամ ասորա-բաբելոնեան.
3. Հիւսիսային կամ հայա-կովկասեան *) (armenico-caucasien)։

Այո, ենթարկելով հանդերձ բնական շրջապատի ազդեցութիւններին, մարդը իր շահերի համեմատ փոփոխում է նրանց։ Առանց աշխատանքի ու քաղաքակրթութեան՝ Եգիպտոսը կը լինէր հին օրերում Նեղոսի տիղմով ծածկուած հսկայական մի ճահիճ... Բայց անթիւ դարերի ընթացքում՝ մարդը կրել է այդ ազդեցութիւնները — լաւ և վատ, դրական և բացասական — առանց հակազդելու որևէ միջոցի. անթիւ դարեր—վայրենութեան ու բարբարոսութեան շրջաններում—բնական ուժերի կառավարութիւնը եղել է միահեծան, տիրական ու բռնաւոր։ Այսօր ես նա շարունակւում է որոշ չափով, անգամ առաջադէմ քաղաքակրթութեան սահմաններում, չը նայեած այնքան դարերի կուլտուրական նուաճումներին։

Եւ ինչպէս տեսանք, մի շարք ժողովուրդներ պատմութեան ու նախապատմութեան անեզր տարածութեան վրայ՝ եղել են առանձնապէս գուրգուրուած, նպաստաւորուած բնութիւնից։ Նրանք վաղաժամ զարգացել են, դարձել ազգ ու հայրենիք, մի մի օրրաներ քաղաքակրթութեան։ Եգիպտոս, Ասորեստան, Փիւնիկիա, Յունաստան, Հռօմ, Իտալիա, Ֆրանսիա—դրանք ժամանակակից քաղաքակրթութեան շղթան են կազմում, նրա այլազան օղակները, որոնցից ոմանք չքացել են դարերի անդունդներում, կտակելով, սակայն, իրենց մտաւոր ու նիւթական գանձերը, գէթ մի մասը, իրենց աւելի երիտասարդ ու կորովի յետնորդներին։

Աւելացնենք։ Բնական, աշխարհագրական պայմանները նպաստաւորում են ազգութիւնների գոյացումն ու զարգացումը, բայց ասել չէ, թէ բոլոր ժողովուրդները, որ հաստատուել են աշխարհագրական բարեյաջող դիրքերի մէջ, կարողացել են մշակել քաղաքակրթութիւնն ու ազգայնութեան գաղափարը, որդեգրել աշխատանքի ու առաջադիմութեան դատը նոյն փութկոտ պատրաստակամութեամբ, նոյն ստեղծագործող եռանդով ու ձիրքերով։ Ահա Թ ի ւ ր ք ի ա ն։ Ահա նրա աննման մայրաքաղաքը, իր եզակի, համաշխարհային, կենտրոնական դիրքով, ուր—Էլիզէ Ռէկլիւի արտայայտութեամբ—Արևելքն ու Արևմուտքը, Ասիան ու Եւրոպան իրարու ընդառաջ են գալիս, գրկւում, համբուրւում... Հինգ հարիւր տարի է, և աւելի, ինչ Թիւրքերը տիրել են ա ր և ե լ ե ա ն Հ ռ օ մ ի ն, և այդ ահագին ժամանակամիջոցում—ոչ մի պրօգրէս Թիւրքական հասարակակարգի մէջ, գրեթէ կատարեալ ճահճացում կեանքի բոլոր ասպարէզներում։ Աւելի ևս։ Թիւրքերի արշաւը կանգնեցրեց համեմատաբար բարգաւաճ ու առաջադէմ այդ երկրի մէջ ամեն պատմութիւն և քաղաքակրթական ամեն աշխատանք։ Անջրպետ դրւեց երկու իրարու հաղորդակից աշխարհների միջև, Տաճկութիւնը և Եւրոպան բաժանեցին անանցանելի խրամատով։ Բռնի ուժը հռչակւեց, որպէս գերագոյն իմաստութիւն և հպատակ քաղաքակիրթ ազգութիւնները ենթարկեցին ամենաանարգ գերութեան, այլասեռեցին, բթացրին։ Եւ այդ սքանչելի երկրների մէջ, ուր բնութիւնը փռել է իր լաւագոյն գոհարները, դարերով թագաւորեց անապատական ամուլութիւնը, մահը, աւերանքը.. Հայրենիք, ազգութիւն և նման բոլոր գաղափարները դեռ չը

*) Lenormant, Histoire ancienne de l'Orient.

ծլած մեռնում են այդպիսի միջավայրում, նրանց կենսատու աղբիւրները ցամաքում են—և տիրոջի և հպատակի մէջ...

Ժամանակը հասաւ ահա՛, երբ ցնցւում է ասիական այդ դժնդակ մեռելութիւնը, երբ սթափւող տաճկութիւնը փորձ է անում՝ իբրև նոր, կազմակերպող ազդութիւն, իր պատուաւոր տեղը բռնելու Արևի տակ... Եւ—ուշագրաւ հանգամանք—այդ խրոխտ ու փրկարար զարթնումի մէջ, երբ յեղափոխական սերունդը համարձակ ձեռք է զարնում՝ մտաւոր ու նիւթեղէն փլատակների վերաշինութեան, երբ դրւում է սահմանաքարը հին ու նոր Թիւրքիայի միջև և դրանով իսկ հիմք է դրւում՝ ազդայնութեան տարերքներին—այդ հանդիսաւոր օրերին հնչում է և օսմանեան վերանորոգիչների բերանից մի նոր խօսք, մի նոր անուն—„Հայրենիք՝—որ մինչ այն գոյութիւն չունէր նրանց բառագրքում՝ կամ ունէր միայն դաղտագողի, արհամարհւած մի գոյութիւն... Առաջին անդամը, ահա նա, „Օսմանեան Հայրենիքը“—թող թէ փոքր ինչ անօրմալ, շովինիստական գունաւորութեամբ—գործածւում՝ է հրապարակով, երիտասարդ Թիւրքերի կողմից, պաշտօնական մի դոկումենտի, „Դաշնակցութիւն-Իթթիհատեան համաձայնութեան“ գրի մէջ...

Դառնանք նիւթին։

Ոչ. ճոխ, փարթամ բնութիւնը մէկէն ի մէկ չի երջանկացնում՝ բոլոր մարդկային ցեղերին, ինչպէս և մերկ, սառնաշունչ ու աղքատիկ բնութիւնը չի միանգամայն դժբախտացնում միւսներին։

Բայց ամէն տեղ, բոլոր պատմական հայրենիքներում, ուր տեսնում ենք հզօր ու բեղմնաւոր քաղաքակրթութիւնների ծաւալում—բոլոր այդ երկրների մէջ դտնում ենք և, իրաւի, ճոխ, արգաւանդ միջավայր, տեսնում ենք բնութեան բարիքների մի անսովոր շռայլում և մեղմ, կենսարար, բարեխառն կլիմաներ...

Կլիմաներ—մանաւանդ։ Աշխարհագրական գործօնների շարքում՝ վաղեմի սոցիոլոգիան (հասարակագիտութիւնը) ծանրանում է առանձնապէս կլիմայի վրայ։ Մօնտեսկիէն տեսնում է նրա մէջ ազբիւր-պատճառը մի երկրի քաղաքական-սոցիալական հատատութիւնների։ Հերդեր *) տալիս է նրան ոչ պակաս կարևոր տեղ ազգերի էւոլիւցիայի մէջ։ Բայց Հերդեր լայն մտքով է ըմբռնում կլիմա բառը, նա յայտնւում է մի տեսակ հաւաքական հասկացողութիւն—*ein Inbegriff der Kräfte und Einflüsse*. ուժերի ու ազդեցութիւնների մի տեսակ բովանդակումն, ամփոփում։ Այդտեղ մտնում՝ են՝ օդի որակը, ջրերը, պարբերական քամիները, այլ և հողի որպիսութիւնը, նրա բերքերը, երկրամասի բարձրութիւնն ու խորութիւնը, մարդկանց կենցաղաձևը, սնունդը, բմպելիքները, ֆլորան ու ֆաունան,—բոլորն էլ շղթայած են իրարու, փոխադարձաբար ազդում են, փոխադարձաբար պայմանաւորում, կազմելով պատճառների ու հետևանքների մի հակայական քաոս... Ամբողջ շրջապատող մթնոլորտը եղէքտրական մի ծով է—ասում է Հերդեր—որ յարաժամ անդրադառնում է մեզ վրայ **)։

Կլիմայի ազդեցութեանն է վերագրում Մօնտեսկիէն մի ժողովրդի առանձնայատուկ ոգին, նրա յուզումները, կրքերը։ Միջավայրը, օդն ու սնունդը կազմակերպում են մարդկանց հակումները, նրանց բարք ու սովորութիւնները։ Ցուրտ ու դաժան կլիմաներում, արեան արագ շրջանառութեան շնորհիւ, սրտի ուժեղ զարկերի, մարմնի ուժեղ հակազդեցութիւնների զօրութեամբ. մարդիկ ունենում են սովորաբար աւելի կուրաժ, արիութիւն, աւելի ինքնագործունէութիւն ու ինքնավստահութիւն, աւելի անկեղծութիւն, նւազ խորամանկութիւն ու խարդախութիւն ***)... Թերևս, դրանով պիտի բացատրել, որ լեռնային ժողովուրդները ընդհանրապէս աւելի մաքուր են, բաց ու անկեղծ, բայց և աւելի միամիտ, աւելի թոյլ իմացականութեամբ օժտւած, քան տափարակներինը... Որքան էլ չափազանցնէ Մօնտեսկիէն կլիմաների ազդեցութիւնը,—կայ, այնուամենայնիւ, նրա տեսութեան մէջ մի յայտնի ճշմարտութիւն։

Տաք կլիմաներում—հակառակն է։ Արեան շնչառութիւնը դանդաղում է, չը կան ուժեղ ռէակցիաներ, նեարդերը թուլանում են—և նւազում է մարդկանց սէնն ու կորովը, և նրանք դառնում են ծոյլ, թուլամորթ ու վեհերոտ, ընդհանրապէս անընդունակ յանդուգն ինիցիատիվի, տոկուն, յամառ ու յարատև աշխատանքի։ Զարգանում է մարդկանց զգայականութիւնը, բորբոքւում են կրքերը և աճում են սնձիրները... Եւ համապատասխան այդ առանձնայատուկ հոգեբանութեան՝ ստեղծւում են ժողովուրդների այլ և այլ հատատութիւնները, յօրինւում է օրէնսդրութիւնը։ Մահմեդի օրէնքը ոգելից ըմպելիների դէմ—ասում է Մօնտեսկիէ—արաբական կլիմայի մի օրէնք է. նա արգելում է մի սովորութիւն, որ պէտք է բորբոքի առանց այն էլ խիստ բորբոքւած զգայնութիւնն ու երևակայութիւնը... Կլիմաները ծնում են բարքեր—բարքերը ծնում՝ են օրէնքներ—օրէնքները կազմում՝ են մի ազգի, մի ժողովրդի քաղաքական-սոցիալական էութիւնը։

Ինչպէ՞ս է սակայն, որ նոյն արաբները, լինելով հանդերձ ի բնէ և ի կլիմայէ մեղմ ու անշարժ, կարողացել են նախաձեռնել—մահմեդականութեան տարածման արշալոյսին, ապա և յետոյ—այնքան արկածալի ու արիւնալի պատերազմների, յանուն կրօնի։ Ի՞նչպէս է, որ Հնդկաստանում ու այլ տեղերում, տաք, այրող կլիմաների մէջ, ժողովուրդները լինելով հանդերձ անարի, երկչոտ, զգայուն՝ դարերի ընթացքում՝ տոկացել են ստոյիկեան պաղարիւնութեամբ այնքան բարբարոս տանջանքների, զոհաբերել՝ են հզօրների սեղանի առջև, խողխողել՝ են մասաներով, յանուն կրօնի ու այլ չարաշուք պաշտամունքների...

Այդ զարմանալի հոգեբանութիւնները ևս Մօնտեսկիէն վերագրում է դարձեալ շրջապատող բնամիջավայրին։ Բնութիւնը, ասում է նա, տւել է այդ ժողովուրդներին—արաբներին, հնդիկներին—մի հրեշաւոր երևակայութիւն. նրանք կուրօրէն, ֆատալիստական համակերպութեամբ գնում՝ են դէպի մահ ու տանջանք, վախենալով աւելի վատթարից... Նրանք գնում՝ են թերևս նաև մղւած այն հրապուրիչ, երանաւէտ հեռանկարներից, որ սպասում՝ են իրենց՝ մահմեդական դրախտի մէջ...

Ընդունենք Մօնտեսկիէի գաղափարների յարաբերական ճշմարտութիւնը և առաջ անցնենք։ Ճշմարիտ է. անշուշտ, որ ցուրտ, լեռնային վայրերի ժողովուրդները, իրենց դիրքի ու կլիմայի պատճառով, լինում՝ են առհասարակ աւելի աշխոյժ ու գործօն, աւելի ըմբոստ ու ազատասէր. բնութեան աղքատութիւնն իսկ ստիպում է նրանց՝ ուրիշ օգտաւէտ զէնքեր փնտրել գոյութեան մենամարտի մէջ, դարձնում է նրանց աշխատասէր և գգօն, տոկուն և դիմացկուն։ Այդ իրողութեան ապացոյց են մի շարք հիւսիսային ժողովուրդներ, մասնաւորապէս Ռուսաստանի ֆինները, հարաւայիններից—լեռնաբնակ հայերը։

Եթէ Մօնտեսկիէ և Հերդեր, ազգային ճակատագիրների այլազանութիւնը բացատրելու համար կոչ՝ են անում գրեթէ բացառապէս կլիմային, ապա կան ուրիշ սոցիոլոգներ, որոնք ամէն բան վերածում՝ են հողագործութեան ճանապարհներին, բնական, խոպան ուղիներին։ Իրօք, այդ բացատրութիւնը գրեթէ նոյնանում է միջավայրի թէորիայի հետ։

„Ժողովուրդների ու ցեղերի այլազանութեան առաջին և վճռական պատճառը ուղին է, որ նրանք բռնել՝ են—ասում է Էդմոն Դըմոլէն։ „Ուղին է, որ ստեղծում է ցեղը և ստեղծում է հասարակական տիպը“ *)։

Անտարակոյս, բնական ուղիները որոշ չափով կերպարանաւորել՝ են ժողովուրդներին. ասիական մշտադալար ստեպ-

*) երկու մեծ գիտնականներ—մինը՝ ֆրանսիացի, միւսը գերմանացի—պատկանում են 18-րդ դարին.

**) *Herder, Ideen zur Philosophie der Geschichte der Menschheit.*

***) *Montesquieu: Esprit des lois.*

*) *Edmond Demolins: Comment la route crée le type sociale.*

ները (դաշտավայր), Սիբիրիայի տունդրաները, Արաբիայի, Սահարայի անապատները, Ասիայի, Հայաստանի լեռներն ու կիրճերը, Միջերկրականի արդաւանդ եզերքները, դրել են իրենց կնիքը անհամար ժողովուրդների, ցեղերի վրայ, թափառական ու նստակեաց։

Ստեպը, լայնատարած ու խոտաւէտ դաշտավայրը, ունել է խաշնարած ժողովուրդների տիպարներ։ Այն ժողովուրդների՝ որոնք երկար դարերի ընթացքում իրենց նօմադ, թափառական դոյութեամբ, իրենց անդուլ, աւարառու արշաւանքներով մի ճշմարիտ պատուհաս են եղել երկրագործ ու նստակեաց ժողովուրդների համար։

Ստեպը—ազատ, լայնաձակ ասպարէզ ամեն տեսակ արկածախնդիր մարդանքների։ Ստեպը—հաղորդակցութեան, մանր-մունր հօրդաների համախմբման դիւրին միջոց։ Մարդիկ աշխատելու և անքալու կարիք չունին։ Բնութիւնը ինքնաբերաբար ու առատութեամբ մատակարարում է ապրուստի անհրաժեշտ միջոցները։ Խոտը, բարձրահասակ, դալար խոտը, մշանջենական ու գերազանց սնունդ է հօտերի, նախիրների։ Կաթը, կումիսը և այլ նման արդիւնքները պահպանում են և մարդկանց սերունդները։ Ձին, իր անխոնջ, արագաթիչ ոտքերով—փոխադրութեան լաւագոյն միջոցը՝ ստեպներում։

Ինչո՞ւ պատուհաս...

Փաստն այդ է։ Պատմութիւնը այդպէս է վկայում իր արիւնոտ, արտասւայօղ էջերով։ Մեծ, ասիական ստեպներից է—կենտրոնական Ասիայի հսկայածաւալ լեռնադաշտից—որ սկսել են իրենց շուն մեր ծանօթ աշխարհաղարդ հօրդաները իրենց դաժան, արիւնարբու հրոսակապետներով. հունները, թաթարները, սելջիւկները. Ատիլան, Չինգիզխանը, Լանկթամուրը։ Նրանք շարժւել են իրենց վեթխարի կարաւաններով, խոտի անեզր ովկիանի մէջ, հեղեղել են հին ու նոր քաղաքակրթութեան օրրանները, մահ ու աւերած տարածել Չինաստանից մինչև Եւրոպայի կենտրոնը։ Կանգ են առել, ուր որ խոտը վերջացել է, ուր տեսել են ահմանը ստեպների թագաւորութեան...

Բոլորն էլ խաշնարած։ Բոլորին էլ ստեպը ընձեռել է անսահման դիւրութիւններ՝ հաւաքւելու, ի մի ձուլւելու ցիր ու ցան հօրդաները, արկածասէր ու կարող հրոսակապետների ղեկավարութեամբ և մղելու նրանց դէպի հարաւ ու արևմուտք, դէպի անծանօթ, հրապուրիչ հօրիզոններ, դէպի թալան ու աւերած։ Հրոսակապետները ոչ այլ ինչ էին, բայց եթէ կարաւանների առաջնորդներ։

Նոյն ասիական բարձրավանդակից իջան թիւրքերը, որ 1453-ին, Մահմէդ II-ի հրամանատարութեամբ անցան Բոսֆորը և պաշարեցին Պոլիսը։

Թիւրքերը եկան ամենից վերջը, և դա չափազանց դիւրացրեց նրանց նուաճողական արշաւանքը. չը կային նրանց հանդէպ ահարկու մրցակիցներ, մեծ գաղթերի ու գրոհների շառաչը լսել էր արդէն, ժողովուրդները—թէ տիրական և թէ հպատակ ու ստրուկ—ընտելացել էին մեծ մասամբ խաղաղ, երկրագործ, կուլտուրական աշխատանքներին, տարավարժւել մեծ մասամբ զենքի ու զրահի գործածութիւնից... Եւ ասիական նոր ու վերջին հօրդայի արշաւանքը, առանց ուժեղ դիմադրութեան հանդիպելու, գրոհ տուեց միշտ դէպի առաջ, միշտ դէպի Արևմուտք, հասաւ ստեպի ու խոտերի ճանապարհով մինչև Վիեննայի դռները, ուսկից և մի առ ժամանակ դողացրեց քաղաքակիրթ Արևմուտքը։

Խաշնարած, գրեթէ միայն խաշնարած էին այդ ահարկու հօրդաները, նրանց ձեռագործ արդիւնաբերութիւնը սղոր-մելի էր, նրանց կուլտուրան՝ սաղմնային։ Նրանք չունին ոչ տուն, ոչ խրճիթ — ասում է պատմագիրը — սակաւ են իջնում ձիուց, չեն մշակում հողը, անում են մսով ու կաթով, թափառում են անվերջ։

Խաշնարածութիւնը յատուկ չէ միայն ասիական մեծ ստեպների այդ հօրդաներին։ Խաշնարած եղել են գրեթէ բոլոր ժողովուրդները, որոնք դրա համար ունեցել են դիւրութիւններ իրենց միջավայրում։ Սօցիոլօգիան վաղուց արդէն հաստատել է, որ ժողովուրդները պարապել են որսորդութեամբ, ձկնորսութեամբ ու խաշնարածութեամբ, նախքան դառնալը երկրագործ, արդիւնաբերող, առևտրական։

Խաշնարածութիւնը եղել է էական պարապմունքը նաև այն անթիւ ժողովուրդների, որոնք, իբրև միևնոյն մեծ „հնդկաեւրօպական" գերդաստանի ճիւղաւորումներ, ապրել են անյիշատակ ժամանակների մէջ Եւրոպայի հարաւարևելքում, ուսկից ճակատագրի մղումով, շարժւել են երբեմն իրենց նախիրներով դէպի ասիական, փոքր ասիական Արևելքը։ Նրանց մէջ է եղել և մեր „հայկեան" փոքրիկ ժողովուրդը։ Ֆռիւգացիների մի ճիւղաւորութիւնն—ինչպէս վկայում են Հերոդոտ ու Ստրաբոն—թէ՞ մեծ, „արիական" ընտանիքի անմիջական մի շառաւիղ՝ հայկեան ցեղը այսպէս թէ այնպէս մասնակցել է նախապատմական այդ գաղթին՝ Արևմուտքից դէպի Արևելք, շարժւել է ասիճանաբար, քայլ առ քայլ դէպի հայկական այժմեան բարձրավանդակը, և ի վերջոյ հաստատւել է Տաւրոսի ու Արարատի միջև, դուրս մղելով մի քանի վայրերից նախնական բնակիչներին։ Նա ևս գտնւել է այն ժամանակ խաշնարածութեան շրջանում։ Բայց այդտեղ, Փոքր-Ասիայի լեռներում ու հովիտներում, արիական ցեղերի մէջ խաշնարածի տիպը ժամանակի ընթացքում կերպարանափոխւել է մասամբ, կամ ամբողջապէս, ծնունդ տալով աւելի բարդ, աւելի բարձր հասարակական կենցաղի։ Այդտեղ, բնութեան առատաբուխ պարգևներին աւելացել է մի ուրիշ տարր—ստեղծագործող աշխատանքը, հողի մշակութիւնը, արհեստները—թեկուզ և չափազանց պարզ, նահապետական—ապա և ապրանքների փոխանակութիւնը, առևտուրը։

Որքա՜ն ահագին տարբերութիւն երկու տիպի ժողովուրդների միջև։ Առաջին տիպը—քաղաքակրթութեան ատրին ասիճանն է. այդ հունները, մոնղոլները, թաթարները, հասարակական կազմակերպութեան տեսակէտից շատ էլ հեռու չեն նախնական պարզ մարդկային համախմբումներից. նրանք կատարեալ բարբարոսութեան մէջ են, ճանաչում են նահապետական գերդաստանի կարգերը միայն։ Հեռուն չեն անցնում։ Եւ նրանց տիրապետութիւնը ամենուրեք ժամանակաւոր է—ոչ մէկը այդ հղօր, աշխարհաւեր նուաճողներից՝ Ատիլաներից, Չինգիզխաններից, Լանկթամուրներից՝ չը կարողացաւ ստեղծել իր բազմամիլիոն հպատակներից ամուր, յարատև պետութիւն, հասարակութիւն։ Հողմերի պէս նրանք եկան, հողմերի պէս անցան գնացին։ Ոչ մէկը այդ հօրդաներից չը դրեց ազգութեան սաղմը։ Դրա համար նրանք պէտք է ազատւէին իրենց նօմադ, թափառական դոյութիւնից և գրկէին կուլտուրական աշխատանքի բէժիմը։ Պիտի դուրս գային հասարակականութեան պարզ, նախնական տիպարից և մտնէին բարդ հասարակութիւնների շրջանը։ Զ'աջողեցին ու փոշիացան։ Իսկ Փոքր-Ասիայի ստեպներում թաւռած մի փոքրաթիւ ժողովուրդ—հայ ժողովուրդը— այդ հողմային արշաւանքներից դեռ շատ առաջ դարեր առաջ մեր քրիստոնէական շրջանից՝ կարողացաւ հիմքը դնել բարդ ու կայուն հասարակական տիպարին և յարատևել, իբրև արդէն կազմակերպւած ազգութիւն՝ ուրիշների անփառունակ կազմալուծումից ու փոշիացումից յետոյ։

Ահա մէկը տիեզերական կուլտուրայի առեղծուածներից։ Նա յարատևեց—այդ փոքրիկ համայնքը, երբեմն նոյնպէս խաշնարած, ապա փոփոխւած, բարդացած. նա յարատևեց նոյնիսկ շատ աւելի խոշոր ու քաղաքակիրթ օրգանիզմների մահից յետոյ—օրգանիզմներ՝ որոնք մի մի կօլոսների պէս հաստատւել էին նոյնպէս վաղուց, աւելի վաղուց, նրա հօրիզոններում, ոչ հեռու նրա սահմաններից և իրենց ճոխ ու փարթամ քաղաքակրթութեամբ շլացրել էին աշխարհը... Բաբելոն, Ասորեստան, Ֆիւնիկիա և ուրիշներ։

„Առեղծուածի" բանալին պէտք է փնտրել ամենից առաջ դարձեալ նոյն աշխարհագրական միջավայրի, բնութեան մէջ... Մի բնութիւն, որ իր անսպառ հարստութիւններով իսկ՝ բիւրաւոր չարիքների աղբիւր եղաւ այդ ժողովրդի համար, բայց որ միևնոյն ժամանակ պայման եղաւ նրա անսահման ֆիզիկական յարատևութեան։ Լեռնատանի այդ բնութիւնը իր անհամբոյր պատկերով, իր դաժան, անհիւրընկալ կլիմայով, աշխատանքի ու վաստակի իր դժուարին պայ-

մաններով, միացած քաղաքական ծանրածանր պայմանների հետ, դարերից ի վեր քշել է իր միջավայրից իր սեփական զաւակներին, որոնք գնացել բուն են դրել աշխարհի չորս կողմերում, ստանալով հրէաների պէս թափառական ցեղի հռչակ: Բայց աշխարհագրական այդ դիրքը, միւս կողմից, պահպանել է ցեղի սուբստանց-կորիզը: Ճիշտ են նկատում Դոլենս և Խաչ՝ „Histoire des anciens Armeniens“ գրքի մէջ, որ „հայոց պատմութեան հասարակական ամբողջ դերը բացատրւում է աշխարհագրական հանգամանքներով“... Թւում է թէ—ասւած է այդտեղ—Հայաստանը անհամբոյր ու խոհեմ, կղզիացել է յօժարակամ և թողել որ ուրիշները՝ վտանգով ու վտանգով՝ շահագործեն օտարներին չափազանց մատչելի եզերքներն ու դաշտերը“... Երբ նա փորձել է դրացիների հետ միցման մտնել, նրան յետ են քշել, բայց չեն կարողացել բնաջինջ անել կամ դուրս մղել, որովհետև նա միշտ ամուր ապաստան է գտել իր անառիկ լեռնավայրում:

Այլ հանգամանք: Գտնւելով հաղորդակցութեան մեծ ճանապարհին Արևելքի ու Արևմուտքի միջև, այդ երկիրը վաղուց ի վեր բաց դուռ է եղել նւաճողական, աւերիչ ու ստրկացուցիչ արշաւանքների համար, բայց կայ դարձեալ մեդալի միւս կողմը, որ մասամբ արդէն ցոյց տւինք:

Շարժւել են այդ ճանապարհով ոչ միայն զրահաւոր ու գիշատիչ լեգէոնները, այլ և ա պ ր ա ն ք ն ե ր ը: Շարժւել են նրանք Ասորեստանից, Պարսկաստանից, արդիւնաբերութեան ուրիշ վայրերից—դէպի Սև ծով, դէպի Արևմուտք, միշտ նոյն անհրաժեշտ, անխուսափելի ուղղութեամբ՝ Հայաստանի վրայով: Շարժւել են ապրանքների հետ և մտքերը, գաղափարները, շարժւել է, կարելի է ասել, ամբողջ հնադարեան կուլտուրան: Եւ այդպիսով, հայ ժողովուրդը, դեռ հեռաւոր, նախապատմական դարերում գտնւելով հին աշխարհի կարաւանների մեծ ճանապարհին, հայ երկիրը այդ անյիշատակ ժամանակներից ի վեր ծառայելով որպէս մի տեսակ մթերանոց, ուրկից անցել են հնատարց ապրանքային հարստութիւնները, ի ն ք ը և ս կամայ ակամայ նետւել է այդ շարժման յորձանքի մէջ—հայ տարրը այդպիսով վաղուց գրկել է առևտրի ու արդիւնաբերութեան դրօշը և դարձել է ժամանակի ընթացքում այն կարևոր ուժը, որին աշխարհը տւել է մի նախանձելի, պատւաւոր տիտղոս—„միջնորդ Ասիայի և Եւրոպայի միջև“:

Առևտուրը չ'եղաւ, սակայն, այդ ժողովրդի էական, զանգւածային զբաղումը: Հայոց բարձրավանդակի առեպները—դեռ չը խօսելով ծոխ, արևոտ ու արգաւանդ սարահարթների մասին—հնարաւորութիւն էին տալիս զարգացնելու նաև հողի մշակութիւնը: Լեռները՝ կտրւած ընդարձակ ու բերրի հովիտներով, ուր առատութեամբ վազում են բարձունքներից հոսող ձիւնաջրերը, գետերն ու վտակները: Այդ հովիտներում ամենահին ժամանակներից երկրագործութիւնը եղել է մարդկանց գլխաւոր պարապմունքներից մինը, իւրաքանչիւր մի համայնք կազմել է, ըստ Հերոդոտի, մի ուրոյն գիւղաւան, նստակեաց ու հողագործ—մինչդեռ խաշնարածութիւնը կազմել է երկրորդական մի զբաղմունք:

Գութա՛նը... Ահա հզօր, ստեղծագործող, քաղաքակրթիչ գործիքը, որ բարձրացնում է ժողովուրդներին աստիճանաբար, նստակեաց գոյութեան դանդաղ, բայց հաստատուն առաջադիմութեամբ՝ դէպի կուլտուրայի ու հասարակականութեան բարձրագոյն հանգրւաններ... Հայ ժողովուրդը վաղաժամ ու բնազդօրէն ըմբռնել է այդ փրկաւէտ ճշմարտութիւնը և—նետւելով հանդերձ կարաւանների մեծ ճանապարհը, մղւելով հանդերձ, ի դէմս իր ձեռնարկու փոքրամասնութեան դէպի առևտրի ու միջազգային փոխանակութեան զարկերակ-ուղիները, հիմնելով շէն, վաճառաշահ քաղաքներ, զարգացնելով որոշ չափով արւեստն ու արհեստները—նա միևնոյն ժամանակ, անգամ կեանքի ամենաահարկու ելևէջներում, ճակատագրի ամենաանողորմ հարւածների տակ, պինդ կպել է իր գութանին, իր մաճին ու արօրին անսասան հաւատարիմ է իր սիրած, թէկուզ և յաճախ դժնդակ, հողի վրայ, իր նւիրական, թէկուզ և յաճախ ողբալի, պապենական տնտեսութեան շուրջը...

Եւ բնազդը չի խաբել նրան: Եւ նա ապրել է հասարակական պատւաւոր գոյութեամբ, ոչ իբրև պարազիտ, մակաբոյծ, այլ քրտնաթօր իր աշխատանքով, իր յաճախ գերմարդկային ճիգերով, իր անսպառ, դիմադրական կորովով: Ապրել է, մղելով միաժամանակ երկու մեծ մարդկային պայքարները — գ ո յ ու թ ե ա ն և ք ա ղ ա ք ա կ ր թ ու թ ե ա ն պայքարը: Բ ն ու թ ի ւ ն ը աջակցել է նրան՝ առաջինի մէջ, ա շ խ ա տ ա ն ք ը՝ վերջինի: Բնութիւնը թոյլ է տւել նրան՝ մերթ գործօն, մերթ կրաւորական, աւելի յաճախ կրաւորական դիմադրութեամբ՝ յետ վանել բնաջնջող արշաւանքները և իր անառիկ լեռնաստանում պահպանել դարեր շարունակ իր ֆիզիկական գոյութիւնը, թէկուզ վիրաւոր, թէկուզ յօշոտւած: Ա շ խ ա տ ա ն ք ը, ստեղծագործող ճիգերը, հնարաւորութիւն են տւել նրան՝ դուրս գալ նախնի, պարզ, խաշնարած հասարակականութեան շրջանակներից և նետւել դէպի ընդարձակ հօրիզոններ, մտնել բարդ, համեմատաբար հարուստ ու կուլտուրանակ ժողովուրդների շրջանը:

Եւ նա բարձրացաւ աստիճանաբար, որքան հնար էր սարսափելի պայմանների մէջ, անօրինակ դիմացկանութեամբ ու տոկունութեամբ դուրս լողալ նախապատմութեան զարհուրանքներից և ոտք կոխեց տիեզերական պատմութեան շէմքում, իբրև ուրոյն ազգայնական մի միութիւն, մշակեց իր համեստ ուժերի չափ գիր ու գրականութիւն, օժտեց ինքզինքը քաղաքական իշխանութեան ատրիբուտներով, իսկ այդ վերջինները իսպառ կորցնելուց յետոյ՝ շարունակեց դարձեալ ապրել իր ազգայնական օրգաններով, իբրև մի համայնք, որ ունի իր որոշ դերը պատմութեան բեմի վրայ, հասաւ քսաներորդ դարին և ահա նորէն ոտք է դնում քաղաքական վերածնութեան ճանապարհի վրայ, բայց արդէն մկրտւելով, ի դէմս իր առաջադէմ տարրերի, ճշմարիտ քաղաքակրթութեան ու դեմոկրատիզմի աւազանում, թօթափելով, ըստ Նալբանդեանի արտայայտութեան, „հնութեան փոշին“, դրժելով հին, կարծեցեալ մեծութեան երազները, Տիգրանների ու Արամների արգահատելի էմբլեմները...

Մէկը շարժւեց, բարձրացաւ, „ազգայնացաւ“, միւսը մնաց յաւիտենօրէն նոյն սառուցեալ կէտի վրայ: Հայ ժողովուրդը այնքան վաղ հրաժեշտ տւեց նօմադականութեան ու վայրենութեան սրտներին, իսկ նրա մի կարգ հարևանները, քրդերը, օրինակ, որ նոյնպէս Հերոդոտների ու Ստրաբոնների ժամանակներում արածում էին իրենց նախիրները նոյն Հայաստանի սարերում, այսօր նոյնն են իրենց բարքերով, պարապմունքով, հոգեբանութեամբ, իրենց բովանդակ հասարակակենցաղով, ինչ որ էին նախապատմական այն խորունկ գիշերի մէջ, երբ Քսենոֆոնը առաջնորդում էր իր Տասը Հազարը Վանայ լճի աւազանով: Նոյն պարզ, նախնի հասարակական տիպն է, որ դեռ դարշում է նստակեաց գոյութիւնից, յամառ, տոկուն ու շինարար աշխատանքից, որ գերադասում է հնձել պատրաստ բարիքները... ոչ միայն բնութեան, այլ և դրացի հասարակութեան:

Դարձեալ՝ մէկը սոցիոլոգիայի անքննելի առեղծւածներից...

Բնութի՛ւն և աշխատա՛նք... Երկու տիրական գործօններ, որ առաջ են մղել հասարակութիւնները, ազգերը դէպի համամարդկային քաղաքակրթութիւն: Ո՞րն է աւելի զօրաւոր: Վերջինը—անտարակոյս: Թէպէտ և առաջինն է ս կ զ բ ն ա կ ա ն ը, մղիչը ամեն աշխատանքի, խթանը ամեն ստեղծագործող կարողութեան: Քանի՛ գիւտեր են արւել—տակաւին նախնի, վայրենութեան օրերում—բնութեան անմիջական ցուցմունքի վրայ, կարելի է ասել, նրա թելադրութեամբ: Քանի՛ հանճարներ, գիտութեան, գեղարւեստի, բանաստեղծութեան, երաժշտութեան և ուրիշ անթիւ ճիւղերի մէջ՝ ստացել են իրենց ներշնչումը շրջապատող բնութիւնից:

„Տնտեսական մատերիալիզմը“ իրաւունք ունի, երբ ծանրանում է աշխատանքի ու տնտեսութեան վրայ, երբ շեշտում է արդիւնաբերութեան գործիքների ահագին դերը ամբողջ մարդկային քաղաքակրթութեան, ապա ուրեմն և ազգային

կերպարանքների էւոլիւցիայի մէջ։ Բայց արդիւնաբերութեան գործիքները և նոյնիսկ առհասարակ աշխատանքը յետոյ են եկել. Նրանք գործադրել են իրենց գերակշռող ազդեցութիւնը էւոլիւցիայի համեմատաբար բարձր աստիճանների վրայ։

Անթիւ դարեր են անցել—մարդը չի իմացել, թէ ինչ է աշխատանքը։ Նա ապրել է բնութեան ծոցում, իր ազգակից անասունների պէս, անտուն ու թափառական, կերակրւել է բնութեան պատրաստի բերքերով, պտուղներով, արմատներով, գիւրին, քարէ որսորդութեան, նահապետական ձկնորսութեան արդիւնքներով։ Անասունների պէս, իր գոյութեան պայքարի մէջ չի ունեցել ուրիշ զէնքեր, բայց եթէ իր ճանկերը, ոտ ու ձեռքը, ամենաշատը՝ մի փայտէ ձող, մի կոճղ, մի սրածայր քար, բիրտ, անմշակ մի դագանակ, որպիսին երբեմն գործածւում են նաև բարձր կապիկային տեսակները պաշտպանողական կամ յարձակողական կռիւների մէջ։

Այդ ահագին ժամանակաշրջանում—որ չափւում է տասնեակ ու հարիւրաւոր դարերով—մարդկային հօրդաները ենթակայ են եղել բնութեան միահեծան ազդեցութեան, քմահաճոյքին։ Եւ այդ հարիւր-դարաւոր էւոլիւցիայի ընթացքում—երբ, անտարակոյս, զրուել են հասարակականութեան որոշ սաղմերը—խօսք չէր կարող լինել „տնտեսական գործօնների“ ու նրանց դերի մասին, մի դեր, որ ուղղափառ դօգմայնութեամբ տարւած Մարքսի աշակերտները կուզէին տարածել ամբողջ մարդկային էւոլիւցիայի վրայ, թէ պատմական, թէ նախապատմական։

Եւ վերջապէս, ինչպէս ասացինք, դարձեալ բնութեան անմիջական մղումով, ներշնչմամբ է հաւանականօրէն, որ էւոլիւցիայի համեմատաբար բարձր աստիճանների վրայ մարդիկ սկսել են կամաց գիւտեր անել, պատրաստել գործիքներ—կաւից, մետաղներից—գտել են կրակը, որ ահագին զարկ է տւել նախնական տնտեսութեանը, և այդ գիւտերով ու գործիքներով նրանք սկսել են հակազդել բնութեան դէմ, կերպարանափոխել բնական այլևայլ բերքերը, կերպարանափոխել հողը և այլն։ Աշխատանքի, տնտեսութեան այդ հակազդեցութիւնը միշտ աւելի ուժեղացել է, միշտ աւելի նւազեցրել, սահմանափակել բնական ուժերի իշխանութիւնը, առանց սակայն կարողանալու իսպառ նրանց չէզոքացնելու։ Եւ ազգերի քաղաքակրթութեան նւաճողական ընթացքը արտայայտւել է հէնց նրանով, որ մէկը աստիճանաբար յաղթահարել է միւսին, մարդ-գործօնը դուրս է մղել բնութիւն-գործօնը։

Աշխատանքը—միանգամայն նիւթական և մտաւոր աշխատանքը—այն հզօր աղբիւրն է, որ արժէք ու հմայք է տւել նորաբողբոջ ազգութիւններին, հանել է նրանց տիեզերական կեանքի բեմ, որոշադրել է յայտնի չափով նրանց ճակատագիրը։ Աշխատանքը նոյնն է ազգայնական օրգանիզմի մէջ, ինչ որ շարժողութիւնը ֆիզիկական մարմինների մէջ. նա շարունակ յեղաշրջւում է, շնչաւորւում, ստեղծագործւում։ Բոլոր իրական հարստութիւնները նա է արտադրում և դրանով իսկ ապահովւում է ազգային մարմնի ոչ միայն գոյութիւնն ու յարատևութիւնը, այլ և անսահման ու անսայթաք առաջադիմութիւնը։

Ամեն մի հայրենիք կամ ազգութիւն հանդիսանում է իբրև միանգամայն նիւթական և գաղափարական մի մարմին, օրգանիզմ։ Երկու ձևի գործունէութիւնները հաւասարապէս անհրաժեշտ են, փոխադարձաբար լրացնում են։ Աշխատանք՝ արդիւնաբերող և աշխատանք՝ իմացական, տրամաբանող ու ստեղծագործող։ Կազմակերպութիւն՝ նիւթական և կազմակերպութիւն՝ մտաւոր, հոգևոր ու բարոյական։

Տնտեսութիւն, գոյքեր ու հարստութիւններ, ապրանքների փոխանակութիւն, հաղորդակցութեան ու փոխադրութեան միջոցներ, աշխատանքի բաժանում, դասակարգեր, հանրային իշխանութիւն և այլն—ահա նիւթական կազմակերպութիւնը, որի անխափան յարատևումը պահանջում է մի յայտնի ներդաշնակութիւն այդ բոլոր ուժերի միջև։

Լեզու, գրականութիւն, գեղարւեստ, գիտութիւն, փիլիսոփայութիւն, կրօն, ժողովրդական լուսաւորութիւն, իրաւունքի ու պարտականութեան հասկացողութիւններ, բարք ու սովորութիւն—ահա մտաւոր ու բարոյական կազմակերպութիւնը։

Երկու ձևի կազմակերպութիւնների մէջ կայ մշտնջենաւոր փոխազդեցութիւն։ Իրերը ազդում են մարդկանց վրայ, մարդիկ՝ իրերի։ Զարգացող տնտեսութիւնը, զարգացող արդիւնագործական ուժերը բնական միջավայրի հետ միասին՝ շարունակ նոր մղումներ են տալիս մարդկային իմացականութեան, ծնում են մարդկանց գլուխներում նոր-նոր գաղափարներ ու ծրագիրներ, բայց մարդիկ միշտ չեն կատարում սոսկ կրաւորական դեր, այլ իրենց հերթին—հզօր ու արգասաւոր յղացումներով, անհատական ինիցիատիվի թափերով—ներգործում են տնտեսութեան ու ամբողջ նիւթական կազմակերպութեան վրայ, յաւերժօրէն կերպարանափոխում, յաւերժօրէն կատարելագործում։

Եւ հասարակութիւնները այնտեղ են միայն համեմատաբար արագ զարգանում և դառնում ու կուլտուրական ազգութիւններ, ուր նիւթական ու գաղափարական աշխատանքի լայնարձակ հօրիզոնների մէջ չեշտւում է այդ անհատական ինիցիատիվը, ձեռներէցութեան ոգին։ Իւրաքանչիւր ազգ—եթէ նա ազգ է բառի նորագոյն ճշմարիտ իմաստով—ունի իր մեծ անհատները, ունի իր խոշոր ինիցիատօրները՝ կամ մտաւոր-հոգեկան կամ նիւթական գործունէութեան աշխարհում։ Երամական հասարակութիւնները, որ զուրկ են „անհատներից“, առհասարակ չեն առաջանում, կամ խիստ դանդաղ... Նրանք չեն աջողում կազմակերպել ճշմարիտ ազգայնական ներդաշնակութիւնը, այլ մնում՝ են լոկ մեքենական համերաշխութիւն, որ յատուկ է բոլոր նախնի համախմբումներին—լոկ անհատների մի հաւաքոյթ և ոչ իսկական օրգանիզմ։ Նրանք տրւում են սովորաբար իրերի հոսանքին և անվերջ դեգերում՝ բռնութեան, հին, պապական սովորութիւնների բռնակալ տիրապետութեան տակ. . .

Բնութիւնը և աշխատանքը դեռ բոլորը չեն՝ ազգային ճակատագրի էւոլիւցիայի մէջ. կայ և պատմութիւնը։

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

„Դրօշակի“ խմբագրութիւնը, պարսկական Մէջլիսի բացման առթիւ, նոյեմբերի 17-ին տւեց հետևեալ շնորհաւորական հեռագիրը.

Մէջլիսի Նախագահին,

Շնորհաւորում ենք Մէջլիսի բացումը՝ յուսալով որ սահմանադրական Պարլամենտը պիտի կարողանայ պատւաւոր կերպով պաշտպանել երկրի ազատութիւնը և քաղաքացիների հաւասարութիւնը, առանց ցեղային խտրութեան։

Սրան իբր պատասխան, նոյեմբերի 22-ին, ստացւեց հետևեալ հեռագիրը.

Դաշնակցութեան, Ժընև.

Խորապէս զգացւած ձեր սիրալիր շնորհաւորականով՝ խնդրում եմ հաճեցէք ընդունել շնորհակալութիւններս։

ՄԷՋԼԻՍԻ ՆԱԽԱԳԱՀ

Moustecharet Doulé

ԱԶԴ

Կը խնդրենք «Դրօշակի» հատով ստացող բաժանորդներէն նորոգել իրենց հասցէները, ուղարկելով մեզի բաժնեգինը, հակառակ պարագային պիտի դադրեցնենք առաքումը նոր տարիէն սկսած։

„ԴՐՕՇԱԿԻ“ ԲԱԺՆԵԳԻՆՆ Է 3 ՖՐԱՆԿ։